

ՔԵՍՈՒՆԻ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԸ

Գլխավոր շարժառիթը՝ որ պատճառ եղաւ ներկայ դրութեան, Ս. Ներսէս Շնորհալի Կաթողիկոսին մահուան ութհարիւրամեակն էր (1173-1973): Եւ իսկապէս, խորհրդաւոր առնչութիւն մը սերտորէն կ'օղակէ Շնորհալին՝ Քեսունի Կարմիր Վանքին հետ. առնչութիւն՝ որ սկսած է այն գեղեցիկ օրէն, երբ Շնորհալի՝ Կարմիր Վանքին կրօնապէս բարձր ու մշակութային խանդավառ մթնոլորտին մէջ, իր մտաւոր ու հոգեկան վերելքի առաջին քայլերն առնելու երջանիկ բախտն ունեցաւ քանի մը տարիներ, իր երէց եղբօր՝ Գրիգոր Պահլաւունիի հետ, ապագային՝ Գրիգորիս Կաթողիկոս:

Ներկայ աշխատութիւնը նուիրուած է Հայկական Կիլիկիոյ կարեւորագոյն վանքերէն մէկուն, հոգ չէ՝ թէ կարճ ժամանակի մը համար փայլած ըլլայ անիկա, որ սակայն կրթարանն է եղած Շնորհալիի նման կարկառուն անձնաւորութեան մը:

Պիտի փորձենք քննական հանգամանքով մօտենալ վանքի մը, որ դարերու թանձր մշտնջող է պարուրուած: Լոյսի վառարան մը, հոգիներու իսկական դարբնոց մը, որ պատմութեան անդիջող մէկ հարուածով՝ զրկուած է երբեմնի իր կենսունակ դործունէութենէն, եւ դատապարտուեր է մնալու առանձին, հեռու հայրենի տաքուկ արեւէն, հեռու նաեւ հայ սիրտերու հոգածութենէն, դարերու հեռաւոր թեւերուն յանձնուած:

Այս մտածումներով է որ լծուեցանք աշխատանքի, վերականգնելու համար Կիլիկիոյ մշակութային մեր պատմութեան գեղեցիկ յուշարձաններէն մէկուն, այն է՝ Քեսուն քաղաքին շատ մօտիկ գրտնուող Կարմիր Վանքին պատմութիւնը, եւ լուսաւորելու անոր մթին ու անծանօթ էջերը, որքան որ մեր միջնադարեան պատմութեան մը՝ ռայլ եւ յաճախ կնճռոտ վկայութիւնները կը թոյլատրեն: Ասով կը համարինք համեստ նպատակ մը բերած ըլլալ Հայկական Կիլիկիոյ մշակութային պատմութեան:

ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՁԱՆԸ

Դրադարկի եւ Սկեւոյի վանքերուն առնթեր՝ կիլիկեան մեր մշակութային պատմութեան ամէնէն աւելի կենսունակ յուշարձաններէն մէկը կ'աղմոյ այս վանքը ո՛ր կը զտնուէր արդեօք:

Առաջին կարեւոր եւ անխուսափելի հարցականն է այս՝ որ մեր առջեւ կը ցցուի, աշխատանքի առաջին իսկ քողէին: Հարցական մը՝ որուն մեր պատմիչները ամբողջական եւ որոշ կերպով չեն պատասխաներ, դժբախտաբար. մանաւանդ թէ, երբեմն իրենց անորոշ եւ խրթին հաւաստումներով, չփոթ կացութեան կը մատնեն ուսումնասէրները:

Լաւադոյն կերպով տեսնելու եւ ըմբռնելու համար՝ Կարմիր Վանքին ծաղումին պարագաները, հարադատօրէն ճշտելու համար անոր աշխարհագրական դիրքն ու վայրը, գրեթէ կը պարտաւորուինք մասնակի կերպով պատմական շրջանակն ուրուագծել, որուն մէջ ծնաւ եւ դործեց Քեսունի այս վանքը:

Միջնադարեան պատմութիւնը կը վկայէ՝ թէ տասնեւմէկերորդ դարը ո՛րքան տխուր էջ մըն է եղած մեր ժողովուրդին եւ մեր Հայրենիքին համար: ԺԱ. դարուն է որ մեր երկիրը գործնականապէս բաժնուեցաւ երկու հակընդդէմ ոյժերու միջեւ, քաղաքական խռովից պայմաններու բերումով: ԺԱ. դարը, պատմական փոթորկավառ ժամանակաշրջան մըն է իսկապէս, երբ թուրք-սելճուքեան հրոսախումբերը՝ նուաճել յետոյ Հայաստանը, նստակեաց դարձան մեր պապեանական հողերուն վրայ, եւ պատճառ եղան որ հայ բնակչութեան խոշոր զանգուած մը պարտաւորուի՝ անհուն թախիծով հեռանալ եւ բնակութիւն հաստատել Արեւմտեան եւ կամ Բիւզանդական հսկայ կայսրութեան ենթակայ հողերուն վրայ, մասնաւորապէս՝ Կիլիկիոյ եւ Կապադովկիոյ շրջանակներուն մէջ:

Արիստակէս Վրդ. Լաւտիվերացին, ԺԱ. դարու մեր ողբերգակ պատմիչը, սրտի անհուն կսկիծով կ'արտայայտուի այս մասին. «Հաստատունք յաշխարհի, կը դրէ ան, ի պանդխտութեան իւրեանց «Հաստատունք յաշխարհի, կը դրէ ան, եւ եղեն վտարանդիք ի ձեռնէն պանդխտեցան երկրորդ անգամ, եւ եղեն վտարանդիք ի ձեռնէն պանդխտաց ասպտամբաց: Ի սիրելեաց քակտեալք՝ զորս ո՛չ սուր սատակեաց, ցրուեցան զօրէն աստեղաց մոլորական կոչեցելոց: Յոր յաւուրս մեր զարթեան պանտրագմունք ի չորից կողմանց. յարեւելից սուր, յարեւմտից սպանումն, ի հիւսիսոյ հուր եւ ի հարաւոյ մահ. բարձան ուրախութիւնք յերկրէ, լոեցին՝ ձայնք քնարաց. լոեցին բոմբիւնք թմբկաց, բարձրացան աղաղակ լալեաց»¹

1. ԱՐԻՍՏԱԿԷՍ ՎՐԴ. ԼԱՍՏԻՎԵՐՏԵՒ, Պատմութիւն, Բ. տպ., Վենետիկ, 1901, էջ 7-8:

LAURENT Ֆրանսացին, որ քննական լուսարձակներով եւ առարկայականորէն մօտեցած կ'երեւի, լրջօրէն ուսումնասիրելով բիւզանդական պատմութեան այս խրթին շրջանները, կը խօսի նաեւ ԺԱ. դարու կարեւոր իրադարձութիւններու մասին: Կ'արժէ լսել իր խօսքերն ալ: Ահաւասիկ.

«Հայերը արաբ աշխարհակալութեան օրերէն՝ դադարած չէին մեծ թիւով գաղթել դէպի Բիւզանդական կայսրութիւն...: Գաղթականներու մեծ մասը նախընտրաբար հաստատուեցաւ Եփրատի արեւմտեան եւ մօտակայ նահանգներուն մէջ, Մելիտինէի, Սեբաստիոյ եւ Կեսարիոյ միջեւ...: Հայոց այս շարունակական համախմբումը, իրենց պետերուն արկածախնդիր եւ աշխարհակալական ուղին՝ մղեց զիրենք տարածելու իրենց հաստատութիւնները դէպի հարաւ, ընդմէջ Կապադովկիոյ եւ Սիւրիոյ, Ժ. եւ ԺԱ. դարերուն Յոյներէն վերագրաւուած եւ մեծ մասամբ անապատ եւ աւերակ գտած երկիրներուն մէջ: Այս նոր Հայաստանի ճորտական իշխանութիւնները շատ շուտով իրենց սահմաններուն մէջ առին Մելիտինէի, Սեբաստիոյ եւ Կեսարիոյ շրջանակը, գրաւեցին արեւմտեան Տաւրոսի երկու զառթիւքները, յետոյ Կիլիկիան, Տարսոնը եւ Եդեսիան: Հայկական գաղութները թափանցեցին նոյնիսկ մինչեւ Անտիօք եւ Որոնդէսի ճամբով՝ մինչեւ սիւրիական Կեսարիա: Քանի մը տարուան մէջ, հայ աղգային կազմակերպութիւնը տարածուեցաւ նաեւ Տաւրոսի, Սիւրիոյ եւ Միջերկրականի միջեւ գտնուած շրջանին վրայ, որ եղաւ Հայերուն համար նոր հայրենիք մը, ուր անոնք շարունակեցին, կայսեր վեհապետութեան տակ, իրենց քաղաքական գոյութիւնը, որ այլեւս անհնար դարձած էր իրենց ցեղային հնադարեան բնակավայրին մէջ»²:

Այս արտագաղթի մահառիթ սկզբնապատճառները, սակայն, հարկ է որոնել ո'չ միայն թուրք – սելճուքեան արշաւանքներու երկաթեայ սմբակներուն տակ, այլ միաժամանակ Բիւզանդական կայսրութեան նենգապատիր ու մոլեռանդ քաղաքականութեան շրջածիրէն ներս³:

Բիւզանդական գոռոզ կայսրութիւնն էր որ յաջողեցաւ վերջ դնել մեր Բագրատունի հզօր թագաւորութեան (չուրջ 1045ին) եւ յաջորդաբար Հայերուն հանդէպ բռնեց սխալ եւ ընդվզեցուցիչ քաղաքականութիւն մը: Չմոռնանք որ վատօրէն հալածանք կազմակերպեց Հայ Եկեղեցականութեան դէմ, Հայ ժողովուրդը ծանր տուրքերու

2. J. LAURENT, Byzance et les Turcs Seldjoucides dans l'Asie occidentale jusqu'en 1081, Paris, 1914, էջ 4-8: Հմմտ. նաեւ Ա. ԱԼՊՈՑԱՃԵԱՆ, Պատմութիւն Հայ Գաղթականութեան սկիզբէն մինչեւ ԺԱ. դար, Ա. հտ., Գահիրէ, 1941, էջ 252-253:

3. Պատմական գոհացուցիչ ընդհանուր տեսութիւն մը կը ներկայացնէ Ա. ԱԼՊՈՑԱՃԵԱՆ, Պատմութիւն Հայ Կեսարիոյ, հտ. Ա., Գահիրէ, 1937, էջ 377-391:

ենթարկեց, եւ աւատապետ նախարարներն ալ յատուկ պարգեւներով ու պաշտօններով վարձատրելէ յետոյ՝ նենգամտօրէն տեղաւորեց Բիւզանդական կայսրութեան վտանգ սպառնացող ճակատներուն վրայ:

Այս բոլոր աննպաստ պայմաններուն՝ հասաւ միանալու ուրիշ անսպասելի դժբախտութիւն մըն ալ:

Բիւզանդիոն, Հայերու հանդէպ իր ցոյց տուած քմահաճ վերաբերմէն յետոյ, երբեք չմտածեց պաշտպան թուրք մը կանգնել իր արեւելեան սահմաններուն վրայ, ուրկէ վտանգաւոր ազդանշաններ սկսած էին գալ՝ սելճուքեան ահաւոր զօրաբանակէն:

Քաղաքական հորիզոնը սկսած էր մթագնել. եւ իսկապէս պատահեցաւ անսպասելին:

1071 թուականին տեղի ունեցաւ Մանազկերտ քաղաքի պատմական ճակատամարտը, բիւզանդական-սելճուքեան բանակներու ուժգին բախումով, որուն ընթացքին՝ Բիւզանդիոյ գահակալ Ռոմանոս Դ. Դիոգենէս կայսրը յաղթուեցաւ եւ գերի ինկաւ Ալփաւանի ձեռքը:

Մանազկերտի ճակատամարտով՝ Բիւզանդիոնի կայսրութեան իշխանութիւնը գործնականապէս վտարուեցաւ Փոքր Ասիայէն: Ասով՝ սելճուք-թուրքերու բանակներուն առջեւ բաց կը ձգուէին ընդմիշտ Եփրատէն դէպի արեւմուտք երկարող բոլոր երկիրները, Փոքր Ասիան եւ ամբողջ Սիւրիան⁴:

1071ի Մանազկերտի բախտորոշ աղէտով, Հայերը՝ ինչպէս նաեւ Բիւզանդացիները, անկարելի կը գտնէին այլեւս բնակիլ հայկական հողերու վրայ: Տիրող այս անորոշ եւ խռովայոյզ կացութիւնն էր, ուրեմն, որ գործնականապէս պատճառ եղաւ որ Հայերը, մաս առ մաս, պարտաւորուէին լքել եւ հեռանալ իրենց բնիկ հողերէն եւ հաստատուիլ կիլիկիան շրջաններու մէջ, Ամանոսի եւ Տաւրոսեան լեռնահանգոյցի խորշերը:

Քաղաքական այս մտահոգիչ կացութեան պատճառով, հայ ժողովուրդի արտագաղթը՝ բնական եւ անխուսափելի պէտք է նկատել: Եկեղեցական դասակարգն ալ, բնականաբար, կը մասնակցէր այս տեղափոխութեան:

Սկզբնական շրջանին՝ տիտուր պէտք է եղած ըլլայ իսկապէս հայ գաղթականներու վիճակը, ըլլա՞յ քաղաքական, ըլլա՞յ նաեւ կրօնական գետնի վրայ: Տիտուր օրեր էին անշուշտ կաթողիկոսական դաւաճող Աթոռին համար ալ. ակամայ ձեռք առած էր ան պանդխտութեան դառն ցուպը եւ սկսած աստանդական վիճակ մը:

4. Մանազկերտի պատմական իրադարձութեան մասին տեսնել՝ ՄԱՆԱՆԴԵԱՆ Թ., Քննական տեսութիւն Հայ ժողովրդի պատմութեան, հտ. Գ., Երեւան, 1952, Գլ. Գ., էջ 64-65:

Բարեբախտաբար, այս տխուր կացութեան թանձր եւ ճնշող մը-
շուշը փարատիլ սկսաւ ԺԱ. դարու վերջերը: Եւ ահաւասիկ թէ ի՛նչ-
պէս:

Մանազկերտի ճակատամարտէն անմիջապէս յետոյ, յունական
բանակին զօրապետներէն՝ փիլաթոս Մատթ. Ուռհայեցիին, կամ փիլաթ-
թոս՝ ինչպէս յոյն պատմիչները կը կոչեն, որ Խարբերդ կը կենար,
իրբեւ վերջապահ գունդերու հրամանատար, եւ Մատթէոս Ուռհա-
յեցիի համաձայն՝ վանքէն փախած իսկական արկածախնդիր մըն էր,
քաջութիւն ունեցաւ թումբ կանգնելու՝ արեւելքէն խուժող սելճու-
քեան ուժեղ յորձանքին դէմ: Փիլարտոս իր քիչ մը բռնակալ նկա-
րագիրով եւ վճռականութեամբ, կարելի է ըսել թէ յաջողեցաւ իր
յանդուղն ձեռնարկին մէջ: Քիչ ժամանակի մէջ յաջողեցաւ ան իր
իշխանութիւնը տարածել Եփրատեան բոլոր նահանգներուն վրայ,
գործունէութեան կեդրոն ունենալով Մարաշը կամ Գերմանիկէ քա-
ղաքը:

Փիլարտոս եւ իր զինակից խումբը ա՛յնքան անուանի եղաւ իր
սխրագործութիւններով, որ Ալեքսիս Ա. Կոմնենոս կայսրը ուրիշ
նախընտրութիւն չունէր՝ եթէ ոչ համաձայնութիւն մը կնքել, եւ
Փիլարտոս հայ իշխանը կայսերական բանակին մէջ բարձր պաշտոն-
ներու անցընել, տալով անոր ՍԵՒԱՍՏՈՍ տիտղոսը⁵:

Այս շրջանին է որ իրեն կը յարին քանի մը հայ իշխաններ, որոնց
մէջ ամէնէն անուանին եղաւ ԳՈՂ ՎԱՍԻԼ հայ իշխանը, փիլարտոսի
ամէնէն քաջարի եւ հաւատարիմ զօրակիցներէն մէկը: Գող Վասիլ
Փիլարտոսի հովանաւորութեամբ, անշուշտ, գրաւելով Կիլիկիոյ ա-
րեւմտեան հողամասը, ճիշտն ըսելու համար՝ Քեսուն գիւղաքաղաքի
շրջակայքը, մինչեւ Հոռմկլայի բերդը, կազմեց ինքնավար փոքրիկ
իշխանութիւն մը: Գող Վասիլի հողերուն մէջ է որ առաւելաբար կը
հաւաքուին ուրիշ փոքր իշխաններ ու հոգեւորականներ՝ իրենց հե-
տեւորդներով, որոնք փախստական իրենց երկիրներէն՝ կ'ապաւինին
անոր վեհանձն հովանաւորութեան, ու ապահով կայք մը կը հա-
տատեն անոր իշխանութեան սահմաններուն մէջ:

5. Փիլարտոս հայ իշխանի անձին եւ գործունէութեան մասին տեսնել՝ ԶԱՄՁԵԱՆ
Հ. ՄԻՔԱՅԷԼ, Պատմութիւն Հայոց, հտ. Բ., Վենետիկ, 1785, էջ 997-1002:
ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, Վենետիկ, 1873, էջ 40-41:
ԿՈՄՄԱԳԵՆԱՅԻ (Եղիա Ս. Քասումի), Փիլարտոս Հայը, Կիլիկիայի Գաղութեան
բում հիմնադիրը, Հալէպ, 1930: ԱԼՊՈՑԱՅԵԱՆ Ա., Պատմական Հայաստանի
սահմանները, Գահրէ, 1950, էջ 100-107: ՔԱՍՈՒՆԻ ԵՐՈՒԱՆԻ, Կիլիկիայի հայ-
կական իշխանապետութիւնը մերձաւոր արեւելի քաղաքական հոլովոյթի մէջ
(1080-1137), Պէյրութ, 1974, էջ 28-31:

«ՍԵԱԻ ԼԵԱՌՆ»Ը

Այս խոռվայոյզ շրջանի պատմութեան ընթացքին, մեր պատմիչ-
ներէն շատեր, ինչպէս Մատթ. Ուռհայեցիին, Կիրակոս, Վարդան եւ
Արիստակէս Լաստիվերտցի, Սմբատ Սպարապետ, Շնորհալին ինքը
եւ ուրիշներ, որոնց առնթներ նաեւ զանազան Յիշատակարաններ,
Փիլարտոսի եւ Գող Վասիլ իշխաններու եռուն՝ գործունէութեան ի-
բրեւ գլխաւոր կեդրոն կը յիշեն ՍԵԱԻ ԼԵԱՌՆ կոչուած վայր մը, ո-
րուն աշխարհագրական դիրքի մասին որոշ տարակարծութիւններ ըս-
տեղծուած են զանազան հեղինակներու քով, ինչպէս ըսինք քիչ ա-
ռաջ, եւ կարելի է խոստովանիլ թէ վերջնականորէն յստակ դադա-
փար մը դոյացած չէ տակաւին: Պիտի ջանանք համախմբել վարկած-
ներն ու զանազան ենթադրութիւնները՝ քաղելու համար ամէնէն հա-
մողիչն ու հաւանականը: ՍԵԱԻ լեռան աշխարհագրական դիրքը ճշ-
տել, մեղի համար պիտի նշանակէր արդէն բաւականաչափ մօտեցած
ԸԼԼԱԼ Կարմիր Վանքին, եւ գտնել անոր պատմական կարեւոր օղակը:

Մեր միջնադարեան պատմիչներու վկայութեան համաձայն՝ այդ
«ՍԵԻ ԼԵՌ» կոչուած վայրը՝ բնական ամրութեամբ օժտուած ԸԼԼԱ-
Լով, յատկապէս ԺԱ-ԺԲ դարերու քաղաքական աննպաստ պայման-
ներու ընթացքին, հաւաքավայր դարձած է ամէնազգի վանականնե-
րու: Հայ, յոյն, ասորի եւ լատին կրօնաւորներ դրացնաբար կ'ա-
պրէին հոն:

1106 թուականին գրուած Յիշատակարան մը հասած է մեր ձեռ-
քը, որ կը վկայէ նոյն ժամանակի քաղաքական անկայուն վիճակին
եւ «ՍԵԻ» լեռան վանական հաստատութիւններուն մասին, խօսելով
Բարսեղ Կաթողիկոսի դէպի Մովսէս զղեակ փոխադրութեան վրայ:

Ահա Յիշատակարանին վկայութիւնը.

«Ի թուականիս Հայոց ՇԾԵ (= 1106), յորում տարամերժեալ
սուրբ Հայրապետ Տէր Բարսեղ ի բուն աշխարհէն եւ յաթոռոյն իւ-
րոյ սեփականէ, եւ իջեալ բնակէր ի սահմանս Զորորդ Հայոց, ի
դղեկին Մովսէս անուն, զմաց յաշխարհն Կիլիկիացոց եւ Խմուտ ի Սեա
լեռան, ուր բազում վանորայք էին մերում ազգիս եւ այլոց ազգաց,
յուճաց եւ փրանկաց եւ ասորոց: Եւ յայնմ ժամանակի հալածումն
եհաս աշխարհիս Հայոց ի յանդիմ ազգաց թուրքաց եւ բազում գա-
ւառք եւ վանորայք աւերեցան եւ մնացեալքն փախստական լինէին»⁶:

Այս Յիշատակարանին վկայութիւնը, կը խորհինք թէ լուսաբա-
նութեան չի կարօտիր:

Ազգային հեղինակներէն առաջինը՝ Արիստակէս Լաստիվերտցի
պատմիչն է, որ ՍԵԻ լեռան եւ անոր լանջերուն վրայ գտնուող կրօ-

6. ՅՈՎՍԷՓԵԱՆ Գ. ԿԹՂ., Յիշատակարան մեզազգաց, Աթիլիս, 1951, էջ 303.
Ընդգծումները մերն են:

նախան հաստատութիւններուն յիշատակութիւնը կ'ընէ, երբ կը խօսի բիւզանդական դոռող դահին վրայ բազմող Ռոմանոս Գ. մոլեռանդ կայսեր՝ Անտիոքի եւ Հալէպի վրայ կատարած անյաջող արշաւանքին մասին, ըսելով որ կայսրը «Եկեալ հանդիպի լեռինն որ կոչի Սեաւ, եւ տեսանէ անդ բազմութիւն վանորէից եւ գմեմաստանս միայնակեցաց, որ ի մարմնի գոլով զանմարմնոցն բերէին զնմանութիւն, որք միով այծէիւ կամ բաճկոնաւ շատանան, զՅովհաննու բերելով զնմանութիւն...»։ Կայսրը երբ իր իշխաններէն որոշ լուսաբանութիւններ կ'ուզէ՝ անոնց ինքնութեան մասին, կը պատասխանեն իսկոյն ըսելով թէ «Սոքա երամք աղօթողաց են, որք աշխարհի խաղաղութեան եւ կենաց ձերոց առողջութեան միշտ խնդրուածս առնեն»։ Ռոմանոս կայսրը կը սրտմտի իսկոյն եւ աղօթքի փոխարէն՝ զինուորական ծառայութիւն կը պահանջէ ճշնաւորներէն⁷։

Հ. Մ. Չամչեանի համաձայն՝ Սեւ լեռան կողմերը կատարուած այս նշանակալից դէպքը տեղի ունեցած է շուրջ 1028ին։ Հ. Ղ. Ալիշան, թերեւս հետեւելով Չամչեանի նշումին, դէպքին եղելութեան թուականը կը դնէ նմանապէս 1028ին⁸։

Այս դէպքէն շուրջ քառասուն տարի յետոյ, այսինքն՝ 1066 թուականին, Սեւ լեռան հաստատութիւնները ուժեղ եւ գաղանաբարոյ յարձակումի մը կ'ենթարկուին պարսկական զօրքին կողմէ, ինչպէս կը հաղորդէ Ուռհայեցի պատմիչը։ Ահաւասիկ պատմիչին վկայութիւնը.

«Յայսմ ժամանակիս (այսինքն 1066-1067 թուականին, նախորդ էջին մէջ յիշուած) զօրաժողով արար ամիրայն Պարսից որ ասի Աւշէն, եւ յապականութիւն դարձոյց զբազում գաւառս, եւ արեան ջախջախիս արարեալ զգասս հաւատացելոց Գրիստոսի, եւ բազում սուգ եւ խաւար տարածեցաւ ի վերայ երկրի ի ձեռաց անօրինիս այսմիկ։ Եւ դայր խաղայր բազմութեամբ զօրօք, եւ արար ձմեռոց ի Սեաւ լեռան, եւ ահադին արեան հեղութիւն եւ կոտորած լինէր յամենայն գաւառն, եւ բազում անձինք ի սրբոց կրօնաւորացն մատնեցան ի բերան սրոյ եւ յայրումն հրոյ, եւ եղին կերակուր գաղանաց եւ թռչնոց, եւ ոչ ժամանեցին ծածկել հողով, վասնզի մնացին անթաղք մինչեւ յաւիտեանս. եւ անթիւ վանորայք եւ գեղք այրեցան հրով, որք երեւին մինչեւ ցայսօր. եւ Սեաւ լեռան եւ ամենայն գաւառն ի ծայրէ ի ծայր լցաւ արեամբ կրօնաւորացն եւ քահանայից եւ արանց եւ կանանց, եւ ծերոց եւ տղայոց...»⁹։

7. ԱՐԻՍՏԱԿԵՍ ՎՐԴ. ԼԱՍՏԻՎԵՐՏՅԻ, ամդ, Գլ. Զ., էջ 31-32։

8. ՉԱՄՉԵԱՆ Հ. Մ., ամդ, հտ. Բ., Գլ. Լէ, էջ 910-911։ ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Սիսուան, Խամագրութիւն Հայկական Կիլիկիոյ, Վենետիկ, 1885, էջ 406։ Դէպքը կը յիշէ նաեւ ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ՊԱՏՄԻՉ, Պատմութիւն, Վենետիկ, 1802, էջ 91։

9. ՄԱՏԹԵՈՍ ՈՒՌՀԱՅԵՑԻ, Պատմութիւն, Երուսաղէմ, 1860, էջ 223։ Ընդգծում-

Ուռհայեցին, յաջորդաբար, կը գրէ նաեւ՝ թէ Փիլարտոս եւ Գող Վասիլ իշխաններու հովանաւորութեամբ եւ Գրիգոր Վկայասէր Կաթողիկոսի աննկուն ջանքերով՝ այդ հաստատութիւններէն ոմանք վերստին շինուեցան իբրեւ հայկական վանքեր։ Խաչակիրներու առաջին բանակին՝ որ Անտիոքի առջեւ անսուղ եւ ուժասպառ կը խոնարհէր, Սեւ լեռան այդ վանքերն ալ, քանի մը հայ իշխաններու հետ, առատաձեռնօրէն կերակուր կը ղրկէն¹⁰։

Ինչ որ կ'երեւի, վանական դրութիւնը՝ այս շրջանակներուն մէջ՝ պէտք է որ գոյութիւն ունեցած ըլլայ բաւական հին ժամանակներէ ի վեր։ Սակայն, մեր ձեռքը հասած տուեալներով, առ այժմ անկարող ենք, դժբախտաբար, որոշ թուական մը սահմանել այդ մասին։ Մեղի ծանօթ է յատկապէս այն իրողութիւնը՝ որ ԺԱ-ԺԲ դարերուն, վանական կեանքը այդ շրջանակին մէջ վերընձիւղեր եւ ընդարձակուեր է. այս պատճառով ալ, զանազան պատմիչներու եւ յիշատակաւորներու կողմէ, Սեւ լեռը կոչուած է ՍՈՒՐԲ ԼԵՈՒ։

Իսկ օտար հեղինակներէն, պարզապէս քանի մը հատը յիշելու համար, կ'արժէ նկատի ունենալ նախ Ս. Ներսէս Շնորհալիի ժամանակակից՝ ԴԻՈՆԻՍԻՈՍ ԲԱՐՍԱԼԻԲԻՆ, որ ԺԲ. դարու ասորի բարձրաստիճան կղերական ու անուանի գրիչ մըն էր, Մարաշի ասորական թեմի եպիսկոպոս. ինքն ալ կը յիշէ Սեւ լեռան անունը, եւ կ'ակնարկէ այդ շրջանակին մէջ գտնուող կրօնական հաստատութիւններուն¹¹։

Սեւ լեռան նոյն հաստատութիւններուն առընչութեամբ՝ հետեւեալ տողերն ունի նաեւ Խաչակրութիւններու պատմագիր ԳՈՒԼԻԷԼ-ՄՈՍ Արքայս. ՏԻՒՐԱՅԻՆ (1130-1183?)։

«... A Septentrione, verbo vulgari et consueto, Montana Nigra dicitur, mons videtur pinguis et uber fontibus, et rivis irriguus, in sylvis et pascuis multas suis habitatoribus praebens commoditates; ubi et priscis temporibus multa traduntur fuisse viro- rum religiosorum monasteria, et usque in praesens Deum timen- tium loca plura fovet et nutrit venerabilia»¹²

Ներք մեզմէ, նմանապէս ՍՄԱՍ ՍՊԱՐԱՊԵՏ նոյն կոտորածի մասին կը խօսի իր Տարեգրիքին մէջ, Վենետիկ, 1856, էջ 67։

10. Հմմտ. Մ. ՈՒՌՀԱՅԵՑԻ, ամդ, էջ 314-315, եւ Ս. ՍՊԱՐԱՊԵՏ, ամդ, էջ 103։

11. ԴԻՈՆԻՍԻՈՍ ԲԱՐՍԱԼԻԲԻ, Հակամատուցութիւն Հայոց դէմ, Թրքմ. Հ. Պօղոս Է. սպալեան, Վենետիկ, 1938, էջ 88 (Աղբ. Մատ. ձեռն.)։ Հատուածը, իր ամբողջութեամբ պիտի արտադրենք յաջորդ էջերուն մէջ, երբ Սեւ լեռան՝ ասորական ծաղում ունեցող քանի մը վանքերուն շուրջ անդրադառնանք։

12. GUILLAUME DE TYR, Recueil des historiens des Croisades, Historiens Occidentaux, հտ. Ա., Ա. մաս, Փարիզ, 1844, Imprimerie Royale, Գիրք Դ., Գլ. Ժ., էջ 168։

Այս հատուածը՝ Թարգմանաբար պիտի նշանակէր հետեւեալը.
«Իսկ այն լեռը՝ որ հիւսիսակողմէն է եւ ժողովրդական ու սովորական բարբառով Սեւ Լեւի կը կոչուի, բերրի վայր մըն է, առատ աղբիւրներով, եւ ոռոգուած գետակներով. իր անտառներով ու արօտավայրերով բազմաթիւ օգուտներ կ'ընձեռէ բնակիչներուն: Կ'ըսուի թէ այդ լեռան վրայ հիմէն ի վեր կային կրօնաւորներու բազմաթիւ մեծատաններ, եւ մինչեւ օրս ալ տակաւին կը ծաղկին հոն աստուածավայս մարդերու շատ պատուական վայրեր»:

Գ. Տիւրացի աւելի մանրամասն ծանօթութիւններ չի տար մեզի: Հետաքրքրական պիտի ըլլար գիտնալ թէ ինքը անձամբ այցելած եւ տեսած է այդ վայրերը՝ թէ միայն լսած. ինչ որ անծանօթ կը մնայ մեզի:

Միջնադարեան արեւմտեան ուրիշ գրիչ մըն ալ, վենետկացի՝ ՍԱՆՈՒՏՈՅ Մարին, ապրած շուրջ 1270-1343 թուականներուն, կը յիշէ նմանապէս կիլիկեան հողերու վրայ գտնուող Սեւ Լեւիը. ահա այդ վկայութեան բնագիրն ալ. «Montagna Nigra dicitur in quo multi sunt heremitae ex omni genere et natione, et plura monasteria monachorum, tam Graecorum quam Latinorum»¹³:

Մ. Սանուտոյի այս բնագիրն ալ, որ Սեւ լեռան հետ կը կապուի, Թարգմանաբար կը նշանակէ.

«Սեւ Լեւ կը կոչուի այն՝ ուր կը գտնուին ամէն տեսակէ եւ ազգէ բազմաթիւ ճգնաւորներ, ինչպէս նաեւ թէ՛ յոյն եւ թէ՛ լատին միանձնեւոր բազմաթիւ մեծատաններ»:

Սեւ լեռան պատմական այս ընդհանուր ծանօթութիւնները քաղելէ յետոյ, մեր մէջ բնականօրէն կ'արթնայ ուրիշ կարեւոր հարցական մը եւս:

Աշխարհագրականօրէն ո՞ր կը գտնուէր արդեօք Սեւ Լեւի կոչուած այս վայրը:

Հարկ է խոստովանիլ թէ Սեւ Լեւիը, հակառակ իր հնութեան եւ պատմութեան, տարօրինակօրէն անծանօթ մնացած է մեզի: Այս պատճառով ալ կը կարօտի իսկապէս լուրջ հետազոտութեան եւ մանրազնին ուսումնասիրութեան մը:

Հ. Ղ. Ալիշան, որ հմուտ աշխարհագէտ մըն է, բառին ամբողջական իմաստով, իր զանազան երկասիրութիւններուն մէջ՝ այս խընդիրն ալ յուզած է եւ անոր լուծում մը տալ ջանացած: Սակայն, այս հմուտ վարդապետն ալ կը ստիպուի, կարծէք, որոշ վերապահու-

13. SANUTO MARIN, III, V. 4: Հմտ. Հ. Ղ. ԱԼԻՇԱՆ, Սիսուամ, էջ 406: Հ. Ալիշան, շատ հաւանաբար, այս հատուածը արտագրած է Սանուտոյի Liber Secretorum Fidelium Crucis (= Խաչի հաւատացեալներուն գաղտնիքներու գիրքը) գործէն:

Թեամբ արտայայտուիլ այս լեռան առնչութեամբ՝ երբ կը գրէ. «Չեն քաջ ծանուցեալ հանդամանք լեռանցս»¹⁴: Այնուհանդերձ՝ հարկ է խոստովանիլ թէ ամէնէն կատարեալ ծանօթութիւններ տուող հեղինակը կը մնայ ինքը՝ Հ. Ալիշան:

Ինչպէս ծանօթ է արդէն, Սիւրիան եւ Ասորիքը՝ Կիլիկիայէն բաժնող խոշոր լեռնաշղթան ճանչցուած է ԱՄԱՆՈՍ անունով: Հ. Ալիշան խօսելով այդ Ամանոս լեռներու հսկայ զանգուածի մասին, կը գրէ նաեւ այս. «Ի միջին դարս յօտարաց եւ ի մերոց՝ ՍԵԱԻ ԼԵՐԻՆՔ կոչէին»¹⁵:

Յաջորդաբար՝ զանազան հեղինակներ, գրեթէ մօտէն, չըսելու համար բառացիօրէն հետեւելով Հ. Ալիշանի ցուցմունքներուն, առանց տատամսելու «ՍԵԱԻ ԼԵՐԻՆՔ»ը կը նշանակեն Ամանոս կամ Կեալուր Տաղ կոչուած՝ մեծ մասով անտառապատ լեռնաշղթային հետ¹⁶:

Ամանոսեան (Օ՝ Αμανός) կոչուած լեռները կը սկսին Սիւրիոյ արեւմտեան սահմանէն, ճիշտն ըսելու համար՝ «Քեսապէն եւ կը յառաջանան դէպի հիւսիս, մինչեւ Ջահան գետի աղեղնաձեւ կորնութեան վրայ, Մարաշի մօտ»¹⁷:

Հայր Մանուէլ Քաջուրի, իր Հայաստանի Աշխարհագրութեան նուիրուած փոքրադիր աշխատութեան մէջ, նկատի առած պատմական ստորդ տուեալներ, «Սեաւ Լեւիմք»ը բացայայտօրէն կ'անջատէ մեր «ՍԵԱԻ ԼԵՐԻՆՔ»էն, նկատելով այս վերջինը Տաւրոսի մէկ մասը, որ «Երրորդ Հայոց ու Կիլիկիայի մէջ կ'իյնայ»¹⁸:

Ս. Ներսէս Շնորհալին ալ, դիտմամբ կամ ոչ՝ կ'անջատէ զոյդ լեռները եւ շատ որոշ ու յստակօրէն կը մատնանշէ Սեւ Լեւիը, երբ կը նկարագրէ Գրիգոր Վկայասէր Կաթողիկոսին Եգիպտոսէն վերադարձը՝ գրելով.

«Մինչ ի Տաւրոս լեռնոն հասեալ

ի Սեաւ մթին լեռնոն անուանեալ»¹⁹:

14. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Սիսուամ, էջ 403:

15. Ամդ:

16. Հմտ. ԿԻԼԻԿԻԱՅԻՐԵԱՆ ԲԱՐԳԵՆ, Ծովք, Վիեննա, 1904, էջ 28-29 (Ազգ. Մատ. Խե.): ԳՈՒՏՈՒԼԵԱՆ ԳՐԻԳՈՐ, Հայ լեռք, Կ. Պոլիս, 1912, էջ 17-19: ԵՐԵՄԵԱՆ Ս. Տ., Հայաստանը ըստ Աշխարհացոյցի, Երեւան, 1963, էջ 84:

17. ՏԵՐ-ՂԱԶԱՐԵԱՆ ՅԱՐՈՒԹԻՆ, Հայկական Կիլիկիա, Անթիպոլիս, 1906, էջ 66:

18. ԳԱՋՈՒՆԻ Հ. ՄԱՆՈՒԷԼ, Աշխարհագրութիւն Հիմ եւ Նոր ճայաստանի, Վենետիկ, 1857, էջ 223:

19. ՇՆՈՐՀԱԼԻ Ս. ՆԵՐՍԷՍ, Բամբ չափաւ, Բ. տպ., Վենետիկ, 1928, էջ 596-597: Ժամանակագիր մը, նմանապէս, գրեթէ բառացիօրէն արձագանգ կ'ըլլայ Շնորհալի խօսքերուն, Հմտ. ՅԱՎՈՐԵԱՆ Վ. Ա., Մամր ժամանակագրութիւններ ժԳ-ԺԸ դարերու, Հո. Բ., Երեւան, 1956, էջ 575:

Արդ, աչքի առջև ունենալով այս կարեւոր տուեալները, կարելի է ամէնէն առաջ հաստատել անվարան՝ թէ Ամանոսեան լեռնաշղթան շատ դժուար է որ իր ամբողջութեամբ «Սեւի ու Մթին» լեռ կոչուած ըլլայ:

Շնորհալի Հայրապետին վկայութիւնը մեզի այս առաջին ու հաստատ քայլը առնել կու տայ:

Այս կարծիքը պաշտպանելու կը ձգտին նաեւ զանազան հեղինակներ, որոնք այս պատմական շրջանը ուսումնասիրելու առիթն ունեցած են:

Օրմանեան Սրբազան, օրինակի համար, այս իմաստով հասկցած կ'երեւի, երբ որոշ հոտառութեամբ կը գրէ՝ թէ Գող Վասիլ Հայ իշխանին հովանաւորութիւնը կը տարածուէր «Ամանոսի եւ Տաւրոսի լեռնաշղթաներուն խառնման կողմերը, Սեւի լեռ կոչուած բարձունքներուն եւ ձորամէջներուն մէջ համախմբուած վանքերուն վրայ»²⁰:

Մանուկ Աբեղեան, նման ծանօթութիւններ կու տայ Ամանոս եւ Տաւրոսեան լեռներու մասին: Սեւ լեռ կը կոչուէր, կը գրէ աւելի իկիլայի եւ Ասորիքի միջեւ հարաւից դէպի հիւսիս ձգուող լեռնաշղթան, աւելի եւս սրա դէպի հիւսիս-արեւելք եւ արեւելք թեքուող ա'յն ճիւղերը, որոնք խառնուում էին Կիլիկիայի հիւսիսային կողմերով դէպի արեւելք պարզուած Տաւրոս մեծ լեռնաշղթայի հետ²¹:

Ինչպէս բացայայտ կ'երեւի, թէ՛ Օրմանեան Սրբազան եւ թէ՛ Աբեղեան՝ Ամանոսէն, այսինքն Սեւի Լեռին՝ կամ Կեւ-Վոնի ՏԱՂէն անջատ լեռ մը կամ շրջանակ մը կը նկատեն Սեւի Լեռը, դնելով զայն զոյգ լեռներու միացման վայրերուն վրայ:

Հարցը այս տեսանկիւնէն դիտուած, կը կարծեմ թէ Շնորհալի Հայրապետին «Միմչ ի Տաւրոս լեռն հասեալ» բացատրութիւնը՝ իր ամբողջական իմաստը կրնայ գոհացուցիչ կերպով գտնել այսպէս: Մեզի համար բացորոշ է արդէն, որ Գրիգոր Վկայասէր Կաթողիկոսը Ամանոսեան լեռներու վրայ չէ՛ որ բնակութիւն հաստատած է, այլ «Սեւի ու Մթին» լեռան վրայ, եւ Շնորհալիի «Միմչ ի Տաւրոս լեռն հասեալ» տողը պէտք է հասկնալ ՏԱԻՐՈՍԻ ՍՏՈՐՈՏԸ իմաստով, ուր կը գտնուէին հայկական ծանօթ վանքերը:

Այս իմաստով հասկցած է նմանապէս Չամչեան՝ երբ Վկայասէր Կաթողիկոսի Երուսաղէմէն վերադարձի մասին կը խօսի: «Եւ ապա դարձ արարեալ ուրախութեամբ, կը գրէ Չամչեան, եկն եւ բնակե-

20. ՕՐՄԱՆԵԱՆ Մ. ԱՐՔ., Ազգապատում, հտ. Ա., Կ. Պոլիս, 1912, սիւն. 1325, թիւ 910. ընդգծումները մեզմէ:

21. ԱՐԵՎԵԱՆ ՄԱՆՈՒԿ, Հայոց հին գրականութեան պատմութիւն, հտ. Բ., Երեւան, 1946, էջ 73-74:

ցաւ յառաջին կայանս իւր ի Սեւի լեռինն՝ առ Տաւրոսիւ, յԱրեգ վանսն»²²:

«ԱՌ ՏԱԻՐՈՍԻԻ» կը նշանակէ ՏԱԻՐՈՍԻ ՔՈՎ, ՏԱԻՐՈՍԻ ՍՏՈՐՈՏԸ: Իսկ Արեգ կամ Արեգի մենաստանն ալ կը գտնուի արդէն Զէյթունէն շատ քիչ հարաւ եւ Մարաշէն վեր, մէկ խօսքով՝ Տաւրոսեան լեռնաշղթային ստորոտը:

Բժ. Թարութիւն Տէր-Ղազարեան, քաջածանօթ՝ Կիլիկեան այդ վայրերուն, բացայայտօրէն կը հաստատէ այս վարկածը՝ մինչ կը գրէ. «Սեւ ու մթին լեռ կ'ըսուի ա'յն հողամասը՝ որ կը տարածուի Զախան գետի կորուսեմէն վեր, Տաւրոսի հարաւային ստորոտի անտառաւ ու լեռնաւ բաժնիմ, Անտեռունի, Կապանի ու Տոնկալայի շրջանները, բայց ո'չ երբեք Ամանոսեան լեռները», աւելցնելով իսկոյն սա տողերն ալ. «Սեւ ու մթին բացատրութիւնը, որ գործածուած է մեր հին գրականութեան մէջ, կը պատկանի միմիայն, «Առ ստորոտս Տաւրոսի» եղած հողամասին համար: Այս հողամասը արդի Անտեռուն, Կապան եւ Տոնկալայի շրջանն է, որ Ամանոսեան լեռնաշղթային չի պատկանիր»²³:

Աւելի մանրամասնութեան իջնելու հարկը չենք տեսներ: Սակայն ընթերցողին նկատողութեան կ'ուղէինք յանձնել նաեւ ուրիշ երեւոյթ մը, որ որոշ նշանակութիւն կրնայ ունենալ եւ նպաստել այս կարծիքին:

Գրեթէ բոլոր հեղինակները, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով Սեւ լեռան եւ անոր վանքերուն յիշատակութիւնը կ'ընեն, այսպէս՝ Ուռհայեցիին, Կիրակոս, Վարդան, Սմբատ Սպարապետ, Շնորհալին, Դիոնիսիոս Բարսաղիբի, Գուրգենիոս Տիւրացի եւ բազմաթիւ Յիշատակարաններ ու վկայութիւններ, միշտ «Սեւի Լեռին» կը գրեն, եղակի ձեւով. մինչ երբ խօսքը Ամանոսի մասին է, կը գրեն «Սեւի Լեռին», յոգնակի ձեւով²⁴:

Այս երեւոյթն ալ, ուրեմն, կարելի չէ՞ արդեօք ուրիշ փաստ մը նկատել՝ յստակօրէն զանազանելու համար «Սեւի Լեռ»ը «Սեւի Լեռին»էն:

Մեզի համար՝ այս զոյգ ձեւով գործածուած տեղագրական ա-

22. ԶԱՄԶԵԱՆ Հ. Մ., ամդ, հտ. Գ., Վենետիկ, 1786, Գլ. Գ., էջ 20:

23. ՏԵՐ-ՂԱԶԱՐԵԱՆ Թ., ամդ, էջ 68:

24. Օրինակի համար՝ տե՛ս ՈՒՌՀԱՅԵՑԻ Մ., ամդ, էջ 223, 315, 355, 416: ԿԻՐԱԿՈՍ ԳԱՆՁԱԿԵՑԻ, Պտմ. Հայոց, Երեւան, 1961, էջ 208: ՎԱՐԴԱՆ ՎՐԴ. ՊԱՏ-ՄԻՁ, ամդ, էջ 91, 111, 116: Ս. ՍՊԱՐԱՊԵՏ, ամդ, էջ 25, 67, 103, 143, 246, 251: ՎԱՀՐԱՄ ՌԱՐՈՒՆԻ, Ուսմանը Պտմ. Ռուբինեանց, հտ. Շահնազարեանց, Փարիզ, 1839, էջ 209: ԹԱԿՈՐԵԱՆ Վ. Ա., Նոյն, էջ 74, 339, 364: ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Հայապատում (մեծադիր), Վենետիկ, 1901, էջ 346, 377 եւայլն, եւայլն:

նունները՝ իրարմէ անջատելու հարցը այնքան բացայայտ է, որ առ այժմ ընդգրկմութեան չի բախիր:

ՍԵՒ լեռան առնչութեամբ կայ ուրիշ կարծիք մըն ալ, որուն համաձայն՝ Սեւ լեռը կը նոյնանայ ներկայիս ԳՍՐԱՏԱՂ կոչուած լեռան հետ:

Այս կարծիքէն է, օրինակի համար, Եղիա Ս. Քասունին, որ կարեւոր նպաստ մը բերելով Անթէպի Պատմագիրքին հրատարակութեան, այսպէս կը յայտնէ իր մտածումը. «Ըստ մեզ՝ կայ մասնաւոր նեղ շրջանակ մը, որ յատուկ իմաստով «Սեւ լեռն» է, այսինքն՝ արդի Գարատաղի գաւառակը, Պաղտընի եւ Ուֆաճըզլըի (կամ Օվաճըզլըի) գիւղերէն դէպի Արապանի դաշտը երկնցած սար մը՝ ինչպէս Սիւրիոյ Փրանսական քարտէսները որոշ նշանակած են, եւ զոր Քիւմոն մեր հաստամետին բարձրագոյն լեռը կը համարի»²⁵:

ԲԺ. Տէր-Ղազարեան, որ Ե. Քասունիի նկարագրած շրջանակը անձամբ տեսած է, կը վկայէ թէ այդ շրջանը լեցուն է իրապէս եիմ վաւերութեամբ բազմաթիւ աւերակներով. տեսած է մենակեացներու յատուկ նեղ քարայրներ, առանձնարաններ եւ վիմափոր սենեակներ²⁶:

Ե. Քասունիի եւ Տէր-Ղազարեանի զոյգ վկայութիւններուն՝ կը ձգտի միանալու նաեւ ուրիշ կարեւոր եւ վստահելի վկայութիւն մըն ալ, որ այս անգամ կու գայ թրքական աղբիւրէ:

Վերջերս հրատարակուած Թուրքիոյ առաջնորդ-ուղեգիրք մը, Փրանսերէն լեզուով պատրաստուած, յատկապէս զբոսաշրջիկներու համար, ընտիր եւ մանրամասնութիւններով լեցուն գեղատիպ հրատարակութիւն մը, ճոխացած բազմաթիւ քարտէսներով, լուսանկարներով եւ ուղեցոյց տախտակներով, կը վկայէ իր կարգին, թէ Գարատաղ լեռան վրայ Bin bir kilise (Հազարամէկ եկեղեցիներ) կոչուած շրջանակին մէջ, կը գտնուին եկեղեցիներու կամ կրօնական հաստատութիւններու բազմաթիւ աւերակներ. միաժամանակ կու տայ շատերուն անուններն ու լուսանկարները, համառօտ ձեւով նաեւ անոնց ներկայ վիճակը. սակայն, այդ շրջանակին մէջ գտնուող բոլոր կառոյցներն ալ «բիւզանդական» կը կոչէ անխտիր. իսկ տուած անուններէն ալ ո՛րեւէ լուսաբանութիւն մը չկրցանք քաղել մեզի համար²⁷:

Գարատաղ լեռան բուն վայրը ճշտելու համար, աչքի առջեւ ունեցանք նաեւ ամերիկեան կարեւոր հրատարակութեան մը զոյգ ընտիր քարտէսները, մէկը տպուած 1956ին, իսկ միւսը՝ 1958 թուական:

25. ՍՍՐԱՖԵԱՆ ԳԻՈՐԳ, Պատմութիւն Ամբէպի Հայոց, հտ. Ա., Լոս Անճէլէս, Գալիֆորնիա, 1958, էջ 204:

26. ՏԵՐ-ՂԱԶԱՐԵԱՆ, ամդ, էջ 87:

27. Հմմտ. TURQUIE, Guide - Atlas Denoël, Voyages et Civilisations, Paris, 1973, էջ 327-328, 335-339. Իսկ նախ վաղեմի փոքրիկ քարտէս տեսնել էջ 323:

ներին: Առաջին քարտէսէն՝ մեղ հետաքրքրող շրջանակը մասնակիօրէն կ'արտատպենք մեր այս էջերուն մէջ: Երկրորդ քարտէսէն օգտուելով՝ առաջինին վրայ աշխարհագրականօրէն իր ճշգրիտ դիրքին վերայ աւելցուցած ենք միայն Գարատաղի անունը, որ թէեւ իբրեւ լեռ դժուած ու նշանակուած էր, սակայն անունը միայն կը պակսէր, ինչ որ ընթերցողը դիւրութեամբ պիտի նշմարէ Մարաշի հարաւ-արեւելեան կողմը, Karasu եւ Merzumen Deresi եփրատի օժանդակ գետերուն միջեւ²⁸:

Տէր-Ղաղարեանի կողմէ պատրաստուած՝ կիլիկեան բերդերու եւ վանքերու փոքրիկ քարտէսին մէջ ալ (կցուած իր հատորին սկիզբը), Գարատաղի երկար սարը կը տեսնուի, շատ յստակ կերպով, միշտ Մարաշ քաղաքի հարաւ-արեւելեան հողամասին վրայ:

Պատմականօրէն, ուրեմն, շատ որոշ է թէ Գարատաղի շրջանը լեցուն է կրօնական կառուցուածքներու բազմաթիւ աւերակներով:

Մեր համեստ ենթադրութեամբ, Գարատաղի այս շրջանը թերեւս եղած ըլլայ Սեւ լեռան յունական հաստատութիւններու բաժինը. սակայն, այս մասին կարելի չէ՝ տակաւին վերջնական դատաստան մը յայտնել եւ մեր կարծիքը կը մնայ միայն ենթադրութեան շրջագիծին մէջ: Բայց ինչ որ որոշ է, եւ համոզուած ենք ասոր, Գարատաղի երկար սարը պէտք է որ պատմականօրէն մաս կազմած ըլլայ Սեւ լեռն կոչուած մեղի ծանօթ շրջանակին:

Փակելէ առաջ ներկայ մեր աշխատութեան առաջին մասը, չէինք ուզեր անտեսել Քասունիի մէկ ուրիշ արտայայտութիւնը, որուն համաձայն՝ Սեւ լեռան սահմանները արդարացիօրէն կ'երկարին մինչեւ արեւելք՝ դէպի Գրգըլտաղ, Եփրատի շրջանը. «Սեւա լեռնն աւանդ, կը գրէ ան, բուն Ամանուսի լեռնաշղթային տրուելէն առաջ... կը պատկանէր... Անթէպի շրջանակին վերնագաւառը՝ Տլուֆէն դէպի Քիւրտտաղ մէկ կողմէն, եւ դէպի Գրգըլտաղ միւս կողմէն»²⁹:

Քասունիի այս կարծիքի առաջին մասին, Ամանուսի նկատմամբ, երկարօրէն անդրադարձանք քիչ առաջ: Իսկ երկրորդ մասին նկատմամբ, այսինքն՝ Սեւ լեռան սահմաններուն երկարումի մասին մինչեւ Գրգըլտաղ՝ որ Քասուն քաղաքի մօտերը կը գտնուի, պիտի անդրադառնանք յաջորդաբար:

28. Երկրորդ քարտէսէն օգտուելով, առաջինէն կատարած մեր արտատպութեան վերայ՝ աւելցուցած ենք նմանապէս, ՔեօՍՈՒՆԻ մօտ KIZIL DAG կոչուած լեռը, եւ մեր կողմէն ալ՝ ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԸ, միշտ Քեսունի մօտ: Չմոռնա՞նք ըսելու որ երկրորդ քարտէսը, այն որ 1938ի տպագրութիւն է, շատ աւելի խոշորցուած քարտէս մըն է, եւ լեռնային գօտիներն ու դաճաթներն ալ շատ աւելի յստակ եւ մանրամասնօրէն նշանակած:

29. ՍԱՐԱՖԵԱՆ Գ., Պատմութիւն Անթէպի Հայոց, էջ 203:

Աչքի առջեւ ունենալով Սեւ լեռան մասին մինչեւ հիմա մեր ներկայացուցած տեղագրական ծանօթութիւններն ու պատմական տրեւելները, ինքնաբերաբար կը յանգինք քանի մը կարեւոր եզրակացութիւններու:

1. ԺԱ. եւ ԺԲ. դարերու քաղաքական իրադարձութիւններու շրջանին՝ զանազան հեղինակներէ եւ Յիշատակարաններու կողմէ ՍԵԱԻ կամ ՍԵԱԻ ՈՒ ՄԹԻՆ լեռը չի՝ պատկանիր ԱՄԱՆՈՍԵԱՆ ԼԵՌՆԵՐՈՒՆ:
2. ՍԵԱԻ լեռը հարկ է որոնել ո'չ թէ Ամանուսեան լեռներուն վրայ, այլ, ինչպէս տեսանք, Ամանուսեան լեռնաշղթային եւ Տաւրոսեան լեռներու միացման վայրերուն վրայ, եւ կամ Տաւրոսի ստորոտը: Ուրիշ խօսքերով՝ Ջահան դետի հիւսիսային հողամասին վերայ, Մարաշ քաղաքի շրջակայքը:
3. ՍԵԱԻ լեռան շրջանակին մէջ պէտք է առնել ներկայիս Գարատաղ կոչուած լեռն ալ, քանի որ Մատթէոս Ուռհայեցի պատկերչին եւ միւս բոլոր պատմական վկայութիւնները կը ձգտին հաստատելու՝ թէ Գրիգոր Բ. Վկայասէր Կաթողիկոսի օրով, Սեւ լեռան պատկանող վանական հաստատութիւնները պէտք էին Զէյթունի մօտ՝ Արեգնի վանքէն դէպի հարաւ եւ հարաւ-արեւելք երկարող գօտիի մը վրայ գտնուիլ:

Այս տեսակէտով՝ Տէր-Ղաղարեանի Սեւ լեռան նկատմամբ տրուած սահմանները թերեւս մեղի աւելի համոզիչ ու հաւանական թրեւին, քանի որ աւելի կը մօտենան պատմականօրէն մեղի հասած նշաններուն եւ իրականութեան:

Այս եղրափակիչ առաջին համադրումը աւելի եւս համոզիչ պիտի դառնայ, երբ ընթերցողը ուշադիր ականարկ մը տայ Ալիշանի «Սիսուան»ի քարտէսին, կամ նոյնիսկ Կիլիկիոյ որեւէ քարտէսի մը: Այս տեսակէտով, մեծ արժանիք ունի Չամչեան, որովհետեւ պատմագէտի հոտառութեամբ օժտուած ըլլալով, իր ժամանակին արդէն Մարաշի կամ Գերմանիկէի վրայ նշանակած է Սեւ լեռան վայրը, իր Հայոց Պատմութեան մեծարժէք գործին Գ. հատորին կցուած Հայաստանի քարտէսին վրայ:

ՍԵՒ ԼԵՐԱՆ ՎԱՆՔԵՐԸ

Սեւ լեռան աշխարհագրական ընդհանուր դիրքը որոշելէն յետոյ, ամբողջացնելու համար մեր տեսութիւնը, կ'արժէ համառօտ կերպով անդրադառնալ նաեւ այդ շրջանակին մէջ գտնուող եւ մեղի ծանօթ վանական հաստատութիւններուն մասին:

Հ. Ալիշան, մեր պատմիչներու եւ ուրիշ հաւաստի աղբիւրներու հաղորդումներուն վրայ հիմնուելով, զանազան անուաններու տակ, որոշ տեղեկութիւններ կու տայ. ահա՛ անոնց անուանները.

Պառլախոյ՝ ասորական լեզուով կոչուած վանքը, որ կը նշանակէ «Իրախտ Աստուծոյ».

Արեգի Ամապատ.

Շուրքի Ամապատ.

Բարսեղեանց Ամապատ.

Վարդկուն վանք.

Մաշկեւոր վանք.

Քարաշիրի վանք.

Շափիրի վանք.

Պաղակիսի վանք.

Ս. Գէորգ վանք (Հատիններու).

Ս. Սարգիս վանք, De Jubino կոչուած (Հատիններու)³⁰:

Տէր-Ղազարեան խօսելով Սեւ լեռան այս հաստատութիւններուն մասին, կը գրէ. «Այս վանքերուն մէջ հաւանական է որ գտնուած ըլլան հայ կրօնաւորներ, որոնք գացած են հոն, ասորերէն եւ կամ յունարէն սորվելու համար, բայց առանձնապէս հայ վանքեր գոյութիւն չեն ունեցած»³¹:

Տէր-Ղազարեանի կողմէ յայտնուած ժխտական այս տեսակէտը՝ մենք անհիմն կը նկատենք, քանի որ անձնական ենթադրութիւն մը միայն կը թուի ըլլալ, եւ զուրկ՝ լուրջ փաստարկումներէ: Ուստի, հարկ կը նկատենք ընթերցողին ուշադրութեան յանձնել հետեւեալ պատմական կարեւոր իրադարձութիւնները.

ա. Եկեղեցական կարեւոր համախմբումներու ընթացքին, ինչպէս՝ օրինակի համար 1113-1114 թուականին, Հռոմկլայի Ժողովին, Սեւ լեռան վարդապետները շատ կարեւոր դերք ունէին, եւ ինչպէս պատմութիւնը կը վկայէ՝ միշտ ալ հրաւիրուած էին:

30. Սեւ լեռան կրօնական այս հաստատութիւններու երկար պատմական ընել հոս, մեզի համար պիտի նշանակէր խկապէս, որոշ եւ երկար շեղում մը կատարել եւ բաւական հեռանալ մեր առաջադրած գլխաւոր նպատակէն: Այս վանական հաստատութիւնները առանձին աշխատութեան մը նիւթ կրնան ըլլալ եւ արդէն անհրաժեշտօրէն պէտք ունին անդրադոյն լուսարանութիւններու, քանի որ այս վանքերուն առընթերցմամբ կը պահսին պատմական գոհացուցիչ ծանօթութիւններ. ոմանք գրեթէ միայն անուանով հասած են, Հմմտ. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Սիսուամ, էջ 405-410: ԿԻԼԻԿԻԱ (Մատենադարան Վերաբարձի), Պետերբուրգ, 1894, էջ 226-227: ԳՈՒՏՈՒԼԵԱՆ Գ., ամդ, էջ 24-27: ՈՍԿԵԱՆ Հ. Հ., Կիլիկիայի վանքերը, Վիեննա, 1957 (Ազգ. Մատ. ՃԶԳ.):

31. Տէր-ՂԱԶԱՐԵԱՆ Թ., ամդ, էջ 67:

բ. Երբ Աղթամարի նորահաստատ կաթողիկոսութիւնը պիտի մերժուէր, Սեւ լեռան Կարմիր վանքին մէջ էր որ տեղի ունեցաւ եկեղեցականներու եւ այլ ժողովականներու հումարումը, թիւով չուրջ 2600 հոգի³²:

գ. Գրիգորիս Կաթողիկոս (Ն. Շնորհալիի երէց եղբայրը), ձեռնադրութենէն ետք՝ «ամենայն վանքերէն» ծաղկած Սեւ լեռան եպիսկոպոսներուն եւ կրօնաւորներուն կողմէ իր օրհնութեան կոնդակը³³:

Պատմական ստույգ երեւոյթներ են ասոնք, որոնք հեշտօրէն չէ՛ կարելի անտեսել քննական լուրջ ուսումնասիրութեան մը ատեն, պատմական երեւոյթներ՝ որոնցմէ կ'եղրակացնենք թէ Սեւ լեռան շրջանակը լի էր հայկական վանքերով:

Սակայն, Հ. Ալիշանի իսկ հեղինակաւոր կարծիքին համաձայն, Սեւ լեռան այս վանքերէն դոնէ՛ երեք-չորս հատը պէտք է որ ասորական ծագում ունեցած ըլլան: Ինչ որ շատ հիմնաւոր է: Արդարեւ, Սեւ լեռան այս վանքերէն դոնէ՛ քանի մը հատը, հայերու սեփականութիւն ըլլալէ առաջ, հաւանօրէն ասորիներու պատկանած են: Անութիւն ըլլալէ առաջ, մասնաւորաբար, այդ վանքերէն քանի մը հասակ կը հաստատեն, մասնաւորաբար, օրինակի համար, ասորական անուաններ տին անուաններ: Այսպէս, օրինակի համար, ասորական անուաններ կը թուին ըլլալ, ՊԱՌԼԱՀՈՅ, ՇԱՓԻՐԻՆ, ՔԱՐԱՇԻԹՈՒ եւ ՊԱՂԱԿ-ՁԻԱԿ խորթաձայն կոչումներ³⁴:

Նախապէս տեսնենք թէ Դիոնիսիոս Բարսալիբի ասորի եկեղեցականը կը լիչէ Սեւ լեռը. կ'արժէ արտադրել հոս այդ հետաքրքրական հատուածը, որպէս նորութիւն, Սեւ լեռան մեզի ծանօթ վանքերէն ոմանց ասորական ծագումին առընթերցմամբ.

«Այս եւս ծանուցանենք ուսումնասիրներուն. 440 տարի առաջ՝ Հայերը Սիւրիոյ երկիրը մտնելով՝ մեր հողը, մեր վանքերը եւ մեր դիւղերը բռնեցին. այն ատեն մեր Պատրիարքն էր Մար Աթանաս, դիւղերը բռնեցին՝ Հայոց եւ անոնց Յովհաննէս Կաթոռ Յոյներու 1037 թուականին՝ Հայոց եւ անոնց Յովհաննէս Կաթողիկոսին հետ, Մանաղիկերտի մէջ, ներքին միութիւն ըրաւ: Այն ժաղիկոսին հետ, Մանաղիկերտի մէջ, ներքին միութիւն ըրաւ եւ Պարսիկները կ'իշմանակ ասոնց թաղաւորութիւնը բարձուած էր եւ Պարսիկները կ'իշխէին հոն: Հայերը սկսան կամաց կամաց Հայաստանէն Սիւրիա իջլիւն. եւ երբ Աթանասիոս Պատրիարքը տեսաւ թէ Սիւրիա իջնողները՝ չունենալով քահանայ ու եպիսկոպոս, քաղկեդոնականներուն կամ

32. Հմմտ. ՈՒՌՀԱՅԵԹԻ Մ., ամդ, էջ 412, եւ ՇՆՈՐՀԱԼԻ Ս. Ն., Թուղթք, Վենետիկ, 1873, էջ 135:

33. Հմմտ. ՎԱՐԴԱՆ ՎՐԴ., ամդ, էջ 116:

34. Հմմտ. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Սիսուամ, էջ 405-410: ՍԱՐԱՅԵԱՆ Գ., ամդ, էջ 207: ՈՍԿԵԱՆ Հ. Հ., ամդ, էջ 270, 265, 303 եւ 275:

Յուդիանիտ աղանդաւորներուն կը միանային, Յովհաննէս Կաթողիկոսին տեղեկացուց, եւ Յովհաննէս երկու եպիսկոպոս զրկեց, որոնք Սիւրիա իջնող բոլոր հայերէն ընդունուեցան, եւ մեր Պատրիարքը սահմանին վրայ անոնց վանք տուաւ, ուր ասորի եւ հայ մանուկներ դրուեցան, որոնք երկու դրականութիւնն ալ սորվեցան եւ վարդապետներու դործերը ասորերէնէ հայերէնի թարգմանեցին: Մեր Պատրիարքին եւ անոնց Յովհաննէս Կաթողիկոսին վախճանելէն ետք՝ (հայերը) անարգեցին պայմանները եւ յարձակեցան մեր ժողովուրդին վրայ: Եւ ոչ իսկ Հայաստանի հայերու լեզուն կը նմանի հոստեղացիներուն. ասոնց լեզուն կը նմանի ասորերէնի, եւ մօտ է մեր բարբառին: Յետոյ կամաց կամաց զրաւեցին մեր եկեղեցիները եւ ՍԵՒ լերան վանքերը, եւ մեր օգնութեան փոխարէն՝ դարձան մեզի հակառակորդ»³⁵:

Բարսալիբէի այս վկայութիւնը կու գայ բացայայտօրէն հաստատելու թէ ՍԵՒ լերան վանքերէն ոմանք՝ պէտք է որ նախընթացաբար ասորական հաստատութիւններ եղած ըլլան:

Եղիա Քասունի եւս կը հաւաստէ այսպէս. «1071ի դարնան, ժամանակ մը Եփրատացւոց ու Կոմմաղենէի կողմերը գտնուած է (Գրիգոր Բ. Վկայասէր Կաթողիկոսի մասին է խօսքը), որոնք այն ատեն տակաւին Բիւզանդացւոց իշխանութեան տակ էին: Բայց արդէն այդ կողմերն, աւելի քան բուն Կիլիկիա, կարեւոր թիւով հայեր դադարած ու հաստատուած ըլլալով, նոյնիսկ վաղեմի ասորի վանքերէն շատեր մինչեւ այն ատեն՝ հայ վանականներու ձեռքն անցեր էին»³⁶:

Բարեբախտաբար Բարհեբրէոսի ժամանակագրութեամբ ասորերէն բնագիրին մէջ ալ շատ կարեւոր հատուած մը կը գտնենք, որ դեռ աւելի կրնայ հիմնաւորել այս ենթադրութիւնը:

Բարհեբրէոս՝ 1065 թուականին առնչուող եղելութեան մը պատմութիւնը կ'ընէ սա տողերով. «Եւ այս տարին, երեք հարիւրի չափ մարդիկ, որ հայ գողեր էին, Գաղիկի որդիին շուրջը հաւաքուեցան, որ ան ալ հայ մըն էր. անոնք դարանի մօտան Մելիտինէի լեռներուն մէջ, ու կը կողոպտէին Գուրոսի եւ Կղաւղիայի գաւառներն ու մասնաւորապէս (ասորի) վանքերը: Որովհետեւ անոնք յարձակեցան Սարգիսիայի վանքին վրայ, եւ մարտիրոսներուն ոսկորները գետին թափեցին եւ դադաղներն առին տարին: Սանգիս գիւղէն, որ Մատիկի վանքին մօտ է, 1100 դինար արծէքով արմտիք վերցուցին, արջառներէն եւ էջերէն զատ, եւ վանքէն իսկ տարին 500 դինար դրամ: Ապա Մելիտինէի կառավարիչներն որոշեցին անոնց տալ Գուրոսի եւ Կղաւղիայի անմշակ մնացած հողերը: Անոնք (կառավարիչները)

35. ԴԻՈՆԻՍԻՈՍ ԲԱՐՍԱԼԻԲԻ, ամգ, էջ 87-88:

36. ՍԱՐԱՖԵԱՆ Գ., ամգ, էջ 214:

մարդ զրկեցին եւ կայսրէն հրովարտակ բերել տուին՝ թէ ասոնք (հայ աւագակները) ստանալու են չորս գիւղ՝ եւ այլեւս գողութիւն ընելու չեն»³⁷:

Բարհեբրէոսի այս վկայութիւնն ալ կու գայ ամրացնել այն կարեւոր ենթադրութիւնը, որուն համաձայն ՍԵՒ լերան վանքերէն ոմանք՝ պէտք են ասորական հաստատութիւններ եղած ըլլալ, հայերու սեփականութիւն ըլլալէ առաջ:

Միջայէլ Ասորի Պատրիարքին ժամանակագրութեամբ ասորական բնագիրին մէջ ալ, Քեսունի Կարմիր Վանքի մասին կայ շատ կարեւոր եւ հետաքրքրական հաղորդում մը, որուն շուրջ անդրադառնալու առիթ պիտի ունենանք ներկայ աշխատութեան Պատմական բաժնին մէջ. անոր համաձայն «Գող Վասիլի կինը առաւ Ասորիներէն Քեսունի մօտ գտնուած Կարմիր Վանքը, որ կը պատկանէր՝ սերունդէ սերունդ՝ մեր ժողովուրդին (ըսել կ'ուզէ՝ Ասորիներու): Ան դուրս հանեց ասորի վանականներն եւ տուաւ Գրիգորիս Կաթողիկոսին եւ հայ վանականներուն. նոյնպէս Զաբարի վանքերը, որոնք Բիթ-Բեհայէ կը կոչուէին, եւ թիւով հինգ վայրեր են, ուր կային շատ վանականներ»³⁸:

Աչքի առջեւ ունենալով պատմական այսքան կարեւոր հաղորդումներ, որոնք ուղղակի կամ անուղղակի կերպով, ՍԵՒ լերան ծածկ վանքերէն ոմանց նախընթացաբար Ասորիներուն պատկանելու ենթադրութիւնը կը հիմնաւորեն, կը փակենք այս հատուածն ալ, ընդունելով սոյն վարկածը իբր համոզիչ եղբակացութիւնը:

ԿԱՐՄԻՐ ՎԱՆՔԻՆ ՏԵՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Ինչպէս տեսանք՝ Կարմիր Վանքը կը պատկանէր Սեւ Լերան կրօնական հաստատութիւններու կարգին:

Հ. Ալիշան, խօսելով Սեւ Լերան ծանօթ վանքերու մասին, կ'ըսէ. «Մեր պատմչաց քով հաղիւ 10 կամ 12 անուն կը գտնեմք Ասորւոց եւ Հայոց վանաց. մերայոց մէջ ամէնէն անուանին էր Կարմիր Վանք»:

37. ԲԱՐՀԵԲՐԷՈՍ, ասորերէն բնագիր, հմմտ. ԱԿՕՍ (ամսաթերթ, Պէյրուս), Ե. տարի (1940), թիւ 5, էջ 104-105:

38. MICHEL LE SYRIEN, Chronique, թրգմ. J. B. Chabot, հտ. Գ., Փարիզ, 1906, պրակ Բ., գիրք ԺԵ., գլ. ԺԱ., էջ 199: Հմմտ. ԱՎԵՆԵԱՆ Հ. Ն., Մատենագրական հետազոտութիւններ, հտ. Ե. (Ազգ. Մատ. ՃՀԳ.), Վիեննա, 1953, էջ 236-237: Նկատի ունենալ որ Միջայէլ Ասորիի այս հատուածին մէջ յիշուած ՁԱԲԱՐ անունը («Զաբարի վանքերը»), Եղիա Քասունիի համաձայն՝ Գըզըլ Տաղի ասորական կոչումն է. վայր մը, ուր կը գտնուէին բաւականաչափ վանքեր: Հմմտ. մեր այս աշխատութեան «Կարմիր եւ Շուղր վերակոչումներ»-ու բաժինը:

մօտ ի Քեսուռն, իշխանամիստն Գող վասիլին...»³⁹։ Նոյն Կարմիր Վանքին շուրջ կ'անդրադառնայ նաև Հայկական Կիրիկիոյ տեղադրութեան եւ պատմութեան նուիրուած իր հսկայ աշխատութեան մէջ, երբ Սեւ Լեւոն վանքերը թուարկելու առիթը կ'ունենայ. այդ ցանկը արտատպեցինք արդէն նախապէս, երբ Սեւ Լեւոն կրօնական հաստատութիւններու շուրջ ընդհանուր ակնարկ մը ուղեցինք տալ։ Հոս նկատել կու տանք, սակայն, որ Կարմիր Վանքին հետ առնչուող բոլոր պատմական տեղեկութիւնները որ կրցած է Հայր Ալիշան գրտնել — ինչպէս, օրինակի համար՝ Գրիգոր եւ Ներսէս (Շնորհալի) Պահլաւունիներու Կարմիր Վանքի մէջ դաստիարակութիւնը, նոյն վանքի Ստեփանոս Մանուկ Վարդապետի ուսուցչական գործունէութիւնը, Աղթամարի ընդվզեցուցիչ դիրքին առիթով կատարուած համազգային ժողովը Կարմիր Վանքին մէջ, եւն. եւն. — զետեղած է ՇՈՒՂՐ ԱՆԱՊԱՏ անունին տակ, որ իր թուարկումին համաձայն՝ երրորդ տեղը կը բաւէ, ինչպէս մեր արտատպումին մէջ ալ կը տեսնուի⁴⁰։

Այս Շուրջ Անպատը, որու մասին յաջորդաբար լայնօրէն պիտի անդրադառնանք, կը գտնուի Մարաշ քաղաքի մօտերը, եւ պատմական հաւաստի հաղորդումներու համաձայն՝ Քեսուռնի մօտ գրտնուող Կարմիր Վանքէն բոլորովին տարբեր կրօնական հաստատութիւն մըն է, եւ որ շրջան մըն ալ Գրիգորիս Վկայասէր եւ Բարսեղ Անցի Կաթողիկոսներուն հայրապետարանը եղած է, Կարմիր Վանքէն առաջ։ Սակայն ինչ որ կը հետաքրքրէ մեզ ներկայիս, Կարմիր Վանքին, Հ. Ալիշանի կողմէ, Սեւ Լեւոն վանական եւ ուսումնական հաստատութիւններու շարքին նկատուիլն է։

Մեր ներկայ աշխատութեան առաջին եղրակացութիւններէն մէկն եղաւ՝ որ Սեւ Լեւոն կոչուած շրջանը չէր կրնար Ամանոսեան լեռներու վրայ գտնուիլ. հարկ էր զայն Մարաշի շրջակայքը որոնել, այսինքն՝ Տաւրոսի եւ Ամանոսեան լեռնազօտիներու գիրկընդխառնումի կամ միացման գիծերուն վրայ։ Այս եղրակացութեան կու գայ այժմ միանալու եւ հաստատուելու Վարդան Պատմիչի ա'յն վկայութիւնն ալ, որուն համաձայն՝ Կարմիր Վանքը կը գտնուէր «ի սահմանս Եփրատ գետոյ առ Տօրոս լեռանք»⁴¹։

39. ԱԼԻՇԱՆ Հ. Ղ., Շնորհալի եւ պարագայ իւր, էջ 49։

40. Հմմտ. ԱԼԻՇԱՆ, Սիւսում, էջ 406-407։

41. ՎԱՐԴԱՆ ՊԱՏՄԻՉ, էջ 102-103։ ԱԼԻՇԱՆ, որ Վարդանի Պատմութեամբ հրատարակէն է, բնագիրին ստորեւ աւելցուցած է. «Կարմիր վանք ի սահմանս Մարաշոյ» բացատրութիւնը։ Այս ուղղութեամբ շատ կարեւոր է նաև ՍԱՄՈՒԷԼ ԱՆՆԵՍԻ պատմիչին արտայայտութիւնն ալ, երբ կ'ըսէ թէ Վկայասէր վանքանցաւ «ի Սեւ լեռն, որ կոչի Տօրոս», տե՛ս Պատմութիւն, Վաղարշապատ, 1893, էջ 113։ ՏՐԴԱՏ ԵՊՍ. ՊԱԼԵԱՆ, Հայաստանի մէջ ծաղկած բոլոր Կարմիր

Բացայայտ կը տեսնուի՝ թէ Վարդան Պատմիչ Կարմիր Վանքը կը զետեղէ ա'յն շրջանակին մէջ, որ մենք նախընթացաբար Սեւ Լեւոն իբրեւ ընդհանուր դիրք նշանակեցինք՝ «Տաւրոսի ստորոտը» բացատրութեամբ. ուրիշ խօսքերով, Կարմիր Վանքին աշխարհագրական դիրքը, միշտ Վարդան Պատմիչին տուած նշումին համաձայն, բնականօրէն կ'իյնայ Մարաշի շրջակայքը, որ սակայն բառացիօրէն պիտի նշանակէր թէ Կարմիր Վանքը կը գտնուէր Սեւ Լեւոն շրջանակին մէջ։ Վարդան, իր այդ պատմական հաղորդումով, կ'ընդարձակէ նաև մեր ծանօթութեան հորիզոնը, երբ կ'ըսէ թէ Կարմիր Վանքը Եփրատ գետի մօտերը կը գտնուէր («ի սահմանս Եփրատ գետոյ»), որ համազօր է ըսելու թէ այդ վանքը կը գտնուէր Մարաշի աբեւելեան հողամասին վրայ։

Վարդանի այս ընդհանուր բացատրութիւնը, սակայն, կրնայ դեռ աւելի լուսաբանուիլ եւ մանրամասնուիլ, Մատթէոս Ուռհայեցի Պատմիչին մէկ այլ մատնանշումով, որ նմանապէս ժամանակակից է դէպքերուն. «Կարմիր Վանքն, կը գրէ ան, մերձ ի Քեսուռն գաւառ»⁴²։ Վարդան եւ Ուռհայեցի պատմիչները, ինչպէս յայտնի է, թէ՛ն տարբեր բացատրութիւն եւ տարբեր արտայայտութիւններ ունին, սակայն աշխարհագրականօրէն նոյն կողմը՝ դէպի Քեսուռն քաղաքի կողմերը կ'ուղղեն մեր հետախոյզ աչքերը, գտնելու համար Կարմիր Վանքին տեղագրական վայրը։

Պատմական այս հաղորդումներուն, հարկ կը զգանք միացնել նաև Ս. Ներսէս Շնորհալիի կարեւոր եւ վստահելի վկայութիւնն ալ, միշտ Կարմիր Վանքի աշխարհագրական դիրքը գտնելու մտադրութեամբ։ Սրբալոյս Հայրապետը, երբ Գրիգորիս Վկայասէրի Եգիպտոսէն վերադարձը կը նկարագրէ, կ'աւելցնէ՝ թէ Կաթողիկոսը

«Մինչ ի Տաւրոս լեռնոյն հասնել,

Անդ ուր սըրբոցն ընկաւ եղբայ,

ի Սեւ մըթիմ լեռնոյն անուանեալ»,

ուրկէ, յաջորդաբար, այցելելու կ'անցնի մօտակայ Կարմիր Վանքը,

«Որ Եփրատայ մերձ առկացեալ

Քաղաք Քեսուռն իմն անուանեալ,

Յոր հույ է վանք Կարմիր կոչեալ։

Անդ յիշխանէ պատուասիրեալ,

վանքերը թուող գրութիւն մը ունի, եւ անոնց կարգին կը դնէ «Կարմիր վանք մը Սեւ Լեւոնի Մարաշի մէջ», «Բիւզանդիոն», Կ. Պոլիս, 1800, թիւ 1127, էջ 289։
42. ՄԱՏԹԷՈՍ ՈՒՐՀԱՅԵՑԻ, անդ, էջ 412։

Աստուածասէր անձն երեւեալ,
Որոյ Վասիլ անուն ձայնեալ,
Նախ ելուզակ մականուանեալ»⁴³ :

Շնորհալիի այս կարեւոր հատուածը, ուր կը յիշուի նաեւ Գող Վասիլ իշխանը, կու դայ դե'ռ աւելի հիմնաւորելու Կարմիր Վանքին աշխարհադրական դիրքը՝ Քեսուն քաղաքի մօտ, եւ միաժամանակ նաեւ Սեւ Լերան շրջածիրին մէջ գտնուիլը :

Կայ ուրիշ վկայութիւն մը եւս, որ անուղղակիօրէն կը նպաստէ մեզի: Յիշատակարանի մը համաձայն, Ռապան կամ Կապան քաղաքն ալ, որ Քեսունի հարաւային կողմն է, կը գտնուէր Սեւ Լերան սահմաններուն մէջ. «Վահրամ Գրիգորիան, որ էր քեռի տէր Բարսեղին եւ կոչեցաւ Վկայասէր, նա վախճանեցաւ ի Սեաւ լեռն, յերկիրն Ռապնայ, Շ եւ Ծ (= 1101) թուին. յամս Վասիլ իշխանին Ռապնայ»⁴⁴ :

Այս պատմական վստահելի հաղորդումներուն վրայ հիմնուած, կրնանք անվարան հաստատել, ուրեմն, թէ Կարմիր Վանքը.

- ա) կը համարուէր Սեւ Լերան վանական հաստատութիւններէն մէկը.
- բ) կը գտնուէր Եփրատ գետին մօտերը, Քեսուն քաղաքին շատ մօտիկ վայրի մը մէջ :

Վեր. Եղիա Քասունին, աչքի առջեւ ունենալով այդ շրջանի պատմական կարեւոր յիշատակարանները, զանազան առիթներով, նոյն տեսակէտը կը յայտնէ, ընդունելով որ Կարմիր Վանքը կը պատկանէր Սեւ Լերան վանքերու կարգին :

«Սեաւ լերանց խորշերը, կը գրէ Քասունին, լի էին այն ատենները զանազան դաւանութիւններէ վանքերով, որոնց մէջ տասնի չափ ալ Հայոց կային: Ասոնցմէ ամէնէն նշանաւորներն էին Քեսունի մօտ Կարմիր Վանքն եւ Ձէյթունի մօտ Արեգի (Ալապաշ) Վանքն»⁴⁵ :

Նմանապէս «Պատմութիւն Ամթէպի Հայոց» պատմադիրքին մէջ, սա տողերը կը գրէ. «Սեաւ լերանց վանքերը, Ձէյթունի մօտ Ալապաշի Արեգի վանքէն մինչեւ Քեսուն Կարմիր Վանքը երկարող գօտի մը կը կազմէին, եւ հաւանօրէն մեր Տլուքն ալ Սեաւ Լերան սահմաններուն մէջ կը համարուէր, բայց եւ այնպէս անոր կեդրոնն էր արդի Գարատաղը»: Եւ այլուր, թէ «Հայ վանքեր՝ մեղուններու փեթակներուն չափ բազմաթիւ, նոյնքան ալ ժրջան ու կենսալիր, բեղուն եռանդով կը շէնցնէին Ուլնիոյ, Բերդոսի, Գերմանիկոյ, Քե-

43. Ն. ՇՆՈՐՀԱԼԻ, Բաճ չափաւ, էջ 598-599, ընդգծումը մեզմէ:

44. ՏԱՇԵԱՆ Հ. ՅԱԿՈԲՈՍ, Ցուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանի ի վիճմնաւ, Վիեննա, 1895, էջ 92, ընդգծումները մեզմէ:

45. ՔԱՍՈՒՆԻ ԵՂԻԱ, Գող Վասիլ, «Աւետարներ» (Հարաթաթերթ, Կ. Պոլիս), ԿԶ. (1913), թիւ 50, էջ 1107:

սունի եւ Տլուքի շրջանակները, զորս մեր պատմութիւնը ընդհանուր կոչումով Սեաւ լերինք կ'անուանէ եւ'որ կը տարածուի Եփրատէն մինչեւ Զահան գետ»⁴⁶ :

Քասունին՝ մինչեւ Քեսուն եւ Եփրատ գետ ըսելով չի գոհանար, այլ բացայայտօրէն կ'ընդգծէ որ Սեւ Լերան հաւանական սահմանները կը հասնէին մինչեւ Գըզլլ Տաղ կոչուած լեռը, որ Քեսունի մօտ կը գտնուի: «Սեաւ լեռն անունը, կը գրէ ա՛յն, ... կը պատկանէր... Անթէպի շրջանակին վերնագաւառը՝ Տլուքէն դէպի Քիւրտտաղ մէկ կողմէն եւ դէպի Գըզլլտաղ միւս կողմէն»⁴⁷: Ուրիշ առիթով՝ դարձեալ. «Արդի Գըզլլ Տաղ, Սեւ լերանց մաս, եւ հաւանօրէն Ասորիներու «Ձորաք լեռ» կոչածը, որ իր հիւսիսային կողին վրայ կը կրէր յիշեալ զոյգ մենաստանները (Կարմիր Վանք եւ Շուղր Անապատ - Հ. Տ. Ե.), ժամանակակից Հայ պատմիչներու կողմէն «Սուրբ Լեռ» կ'անուանուի»⁴⁸ :

«Գըզլլ Տաղ» լերան մասին լայնօրէն պիտի անդրադառնանք քիչ յետոյ. սակայն կը փափաքէինք նշել սա կարեւոր եւ անժխտելի իրականութիւնը՝ թէ բազմաթիւ վկայութիւններու եւ հիմնաւոր կարծիքներու դիմաց, պարտաւորուած ենք ընդունել՝ որ Կարմիր Վանքը կը մտնէր իսկապէս Սեւ Լերան պատմական սահմաններուն մէջ, եւ կը պատկանէր անոր կրօնական կամ վանական բազմաթիւ հաստատութիւններու կարգին:

Քեսուն քաղաքը պատմականօրէն կապուած է Գող Վասիլ Հայ իշխանի անունին հետ:

Ներկայ ուսումնասիրութեան սկիզբը տեսանք արդէն թէ Գող Վասիլ՝ Փիլարտոսի ամէնէն քաջարի եւ հաւատարիմ զօրակիցներէն մէկն էր: Շատ հաւանօրէն, Փիլարտոսի խորհուրդով եւ անոր ամօրէն, ջակցութեամբ է որ ան գրաւեց Կիլիկիոյ արեւելեան հողամասը, ճիշտն ըսելու համար՝ Քեսուն քաղաքին շրջակայքը, մինչեւ Հռոմ-կլայի բերդը, եւ կազմեց փոքրիկ՝ սակայն ինքնավար իշխանութիւն մը:

Միւթար Այրիվանցիին, որ ԺԳ. դարու պատմիչ մըն է († 1290), Փիլարտոսի այս աջակից իշխանի մասին կը գրէ. «Գող Վասիլն էառ զՔեսուն եւ զՌաբան», դէպքը զետեղելով 1081-1085 թուականներու միջեւ⁴⁹, կամ ինչպէս Միքայէլ Ասորին կը գրէ, Գող Վասիլ իշխանը «ի ժամանակի Փիլարտոսին՝ ունէր զՔեսուն եւ զՌաբան»⁵⁰:

46. ՍԱՐԱՅԵԱՆ Գ., Պատմութիւն Ամթէպի Հայոց, էջ 205 եւ 217:

47. ՍԱՐԱՅԵԱՆ Գ., ամգ, էջ 203:

48. «Ակոս», Ե. տարի (1949), թիւ 5, էջ 110:

49. ՄԵԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆՅԻ, Պատմութիւն Հայոց, հրտ. Միւրտիէ Էմին, Մոսկուա, 1880, էջ 60:

50. ՄԻՔԱՅԷԼ ԱՍՈՐԻ, Ժամանակագրութիւն, Բ. տպ., Երուսաղէմ 1871, էջ 406:

Ֆրանսացի պատմագետ՝ Laurent-ի մէկ արտայայտութիւնը, որ մեր աշխատութեան սկիզբը արտադրեցինք՝ Հայերու կողմէ Եփրատեան հողերու գրաւումին առնչութեամբ, լիովին կը զօրէ նաեւ հոս: Նոյն հեղինակաւոր գրիչը ուրիշ հատուած մըն ալ ունի, որ դեռ աւելի կը յստակէ պատմական ժամանակակից մռայլ հորիզոնը: Laurent անդրադառնալով ԺԱ. դարու քաղաքական տխուր իրադարձութիւններու մասին, կը գրէ թէ Հայերը «կը գրաւէին կայսրութեան արեւելեան նահանգները: Կը կազմէին բնակչութեան գրեթէ ամբողջութիւնը Իբերիոյ (Հիւսիսային Եփրատի հովիտ) եւ Միջագետքի (հարաւային Եփրատի) թեմերուն, որոնք զուտ հայ երկիրներ էին: Բայց անոնք կը բնակէին նաեւ մեծ թիւով Եփրատի արեւմտեան երկիրը, ուր դաղթականներ եկած էին անոնցմէ: Անոնք գրաւած էին Տաւրոսը՝ Մելիտինէի, Սեբաստիոյ, Կապադովկեան Կեսարիոյ, Տարսուսի, Հիւսիսային Սիւրիոյ եւ Եդեսիոյ երկրին միջեւ: Մելիտինէն Սեբաստիա, Փոքր Հայոց մէջ, Հայերը ամէն տեղ բազմաթիւ էին, բայց Միջին դարուն անոնք դարձան բացարձակ տէրը այդ երկրին»⁵¹:

Laurent՝ «սակայն Հայերը Միջին դարուն դարձան բացարձակ տէրը այդ երկրին» բացատրութեամբ, ակնարկել կ'ուզէ, բնականաբար, Փիլարտոսի եւ Գող Վասիլ իշխաններու սխրագործութիւններով սկսուած եւ Ռուբինեան իշխաններու բազմակի ձեռք բերուած շօշափելի արդիւնքին: Սելճուքեան հրոսախումբերու դէպի Հայաստան ներխուժումին պատճառով՝ ծանր արտադաղթ մը սկսած էր դէպի Կիլիկիոյ արեւելեան շրջանակները. այդ իսկ պատճառով՝ Գող Վասիլի շուրջ, որ փոքրիկ՝ սակայն ազատ իշխանութիւն մը ստեղծած էր, կը հաւաքուէին բազմաթիւ ուրիշ հայ իշխաններ՝ իրենց հետեւորդներով⁵²:

Թէ Գող Վասիլի իշխանութեան սահմանները մինչեւ ո՛ւր կը հասնէին, կ'արժէ այդ մասին ալ լսել Եղ. Քասունիի հեղինակաւոր ձայնը, որուն բոլորովին համաձայն ենք:

«Ուսումնասիրելով Վարդան Պատմիչի յիշատակութիւնները բազմաթիւ, կը գրէ Քասունի, կը սորվինք թէ Վասիլի իշխանութեան սահմանն ընդհանրապէս կը հասնէր մինչեւ Շնջէ (Կէօքսու) դետակի վարի ձորը՝ Պեհեսնիի եւ Հոսնըմանսուրի մէջտեղ. հարաւէն Հոռոմ-

կլայ ամրոցը կ'ընդգրկէր. արեւմուտքէն կը հասնէր մինչեւ Ջահան դետը, որով Կէօյնիքի դաշտը եւ Բերդուս իրեն կը պատկանէր. բայց Մարաշ դեռ ոչ, ու Յունաց կողմէն կ'իշխէր Թաթուլ հայ իշխանը. թերեւս ոչ նաեւ Ուլիիոյ (Ջէյթուն) եւ Ֆրոնուզի ու Կապանի շրջանները, ուր ուրիշ հայ իշխան մը, թերեւս Ռուբէնի մէկ որդին: Վասիլի իշխանութեան հիւսիսային սահմանն էր բնակչանաբար Տաւրոսի Ազատդ սարը, որմէ անդին կը տարածուէր Մելիտինէի ընդարձակ ու արդաւանդ նահանգը, ուր տակաւին կ'իշխէր Յոյն Գաբրիէլը»⁵³:

Քեսուն քաղաքը Գող Վասիլի գործունէութեան, կամ լաւագոյն պիտի ըլլար ըսել՝ անոր իշխանութեան մայրաքաղաքն էր (1082-1112, Հոկտ. 12): Անոր իշխանութեան շրջանին, ինչպէս Բարհերէոս ասորի պատմիչը կը վկայէ, Քեսուն փառաւոր քաղաք մըն էր, պարսպապատ, աշտարակաւոր եւ ամրաշէն դռներով⁵⁴: Սակայն, հարկ ըստպատ, աշտարակաւոր եւ ամրաշէն դռներով⁵⁴: Սակայն, հարկ կը զգանք նշել թէ Գող Վասիլի իշխանութեան կեդրոնը՝ Քեսուն, պէտք չէ թիւրիմացութեամբ նոյնացնել Պեհեսնի քաղաքին հետ, որ նմանապէս Քեսունի գաւառին կը պատկանէր: Բարդէն Կիւլէսէրեան եւ Օրմանեան Սրբազան, Քեսուն քաղաքը, անուշադրութեամբ կամ թիւրիմացութեամբ, նոյնացուցեր են Պեհեսնի քաղաքին հետ, որ Քեսունի Հիւսիսային կողմը կը գտնուի⁵⁵: Սակայն, եթէ ուշադրութեամբ հետեւինք Ուսումնասիրի Պատմիչին, որ ժամանակակից դէպքերը որոշ մանրամասնութեամբ կը հաղորդէ մեզի, պիտի նշմարենք, անկասկած, թէ այս երկու քաղաքներու զանազանութիւնը շատ բացայայտ է հոն⁵⁶:

Այս զոյգ քաղաքները նոյնացնելու պարագային, Կարմիր Վանքին աշխարհագրական դիրքն ալ կը ստիպուինք տեղափոխել, եւ հետեւաբար մէկնաչել նաեւ պատմական բոլոր հաղորդումներուն դէմ, քանի որ Կարմիր Վանքը, ինչպէս տեսանք, եւ ստորեւ վկայութիւններու ձամբով դեռ աւելի պիտի յստակենք, կը գտնուէր Քեսունի շատ մօտիկ, եւ ոչ թէ Պեհեսնիի մօտ: Քեսուն բերդաքաղաքը կը գտնուէր Մարաշի կամ Գերմանիկէի ճիշտ արեւելեան կողմը, Եփրատ գետին մօտերը, Պեհեսնիէն հարաւ, ինչպէս բացորոշ կ'երեւի Հ. Ալիշանի հրատարակած պատմական Հայաստանի քարտէսին մէջ (տպ. լիշանի հրատարակած պատմական Հայաստանի քարտէսին մէջ (տպ.

51. J. LAURENT, ամդ, էջ 67: Հմտ. նաեւ ԱԼՊՈՅԱՅԵԱՆ Ա., Պատմութիւն հայ գաղթականութեան սկիզբէն մինչեւ ԺԱ. դար, էջ 251-252:

52. Գող Վասիլ իշխանի անձին եւ գործունէութեան շուրջ տեսնել ՔԱՍՈՒՆԻ ԵՂ., «Աւետարեք», ԿՁ. (1913), թիւ 50, էջ 1190-1190, թիւ 51, էջ 1218-1220: Նոյն Հեղինակը, միշտ Գող Վասիլի շուրջ, շատ աւելի ընդարձակ, խնամուած եւ չափեկան ուսումնասիրութիւն մը ունի. տե՛ս «Ակոս» (Երկամեայ հանդէս գրականութեան եւ արուեստի, Պէյրուս), Ե. (1949), թիւ 5, էջ 101-112, թիւ 6, էջ 88-101 եւ Զ. (1950), թիւ 1, էջ 114-123:

53. ՔԱՍՈՒՆԻ ԵՂ., «Ակոս», Ե. (1949), թիւ 5, էջ 111: ՍԱՄՈՒԷԼ ԱՆՆՑԻ կը գրէ թէ երբ 1112ին Գող Վասիլ կը վախճանէ, տէր էր արդէն «Քեսուն, Բեհեսնոյ, Մարաշայ, Բաղմայ, Փարգմանայ, Հոռմկլայիմ, Մարոյ եւ այլ գաւառաց», Պատմութիւն, էջ 122:

54. Հմտ. ԱԼՊՈՅԱՅԵԱՆ Ա., Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, Պէյրուս, 1961, էջ 488:

55. Հմտ. ԿԻԻԼԷՍԷՐԵԱՆ Բ., Ծովք, Նոյն, էջ 28 եւ 71: ՕՐՄԱՆԵԱՆ, Ազգապատմութիւն, հտ. Ա., տիւն. 1825, թիւ 910:

56. Մ. ՈՒՌՀԱՅԵԱՆ, Հմտ. օրինակի համար էջ 443 եւ 520, 522 եւ 524:

Վենետիկ, 1849 թուականին), եւ կամ ամերիկեան ընտիր հրատարակութենէ մը կատարած մեր արտատպումին մէջ:

Գ. Սարաֆեան, որ լաւատեղեակ անձ մը կը յայտնուի յիշեալ վայրերուն, կը հաստատէ նմանապէս թէ Բեսունը «կը գտնուի Պեհեսնիէն չորս ժամ հարաւ. հոն կը բնակէին 200 տուն մահմետականք, թուրք եւ քիւրտ»⁵⁷:

Ունինք ուրիշ վկայութիւններ եւս, Կարմիր Վանքին աշխարհագրականօրէն Բեսունի մօտ գտնուելուն առնչութեամբ:

Պէնէեան քահանայ, որ Մալաթիայի մասին տեղագրական եւ վիճակագրական աշխատութիւն մը ունի, կը վկայէ իր կարգին՝ թէ «Բեսունի մէջ ալ կայ 5-6 տուն հայ. հոս կայ սրբավայր մը «Կարմիր Վանք» անուամբ, այժմ մասամբ աւերակ: Բեսունը ջրալից եւ լի պարտէզներով Պեհեսնիի ամէնէն գեղեցիկագիր գիւղն է: Կ'ըսուի թէ ի հնումն քաղաք էր եւ Պեհեսնիի արդի բնակիչք ասկից են գաղթած»⁵⁸:

Աւետիս Թէքէեան, Սիմնի մէջ «Պեսնին եւ Բեսունը» խորագիրով տեղագրական հաղորդումներ ունի, ուր կը գրէ նաեւ. «Այս Բեսուն գիւղաքաղաքը իր շուրջը ունի համասփիւռ աւերակներ, որոնք անոր հին փառքին մնացորդներն են: Այս աւերակներուն մէջ կը գտնուին Հայոց պատմական Կարմիր Վանքին փլատակները: Ըստ հնամենի սովորութեան, Պեսնիէն Հռոմկլայ, Ս. Ներսէսի վանքը ուխտի դացող մեր հայրենակիցները պարտաւոր էին իրենց ճամբուն վրայ իջեւանիլ Բեսունի Կարմիր Վանքի աւերակներուն մէջ, հոն ուխտ կատարելու, մատաղ կտրելու եւ պատարագ մատուցանել տալու համար»⁵⁹:

Անթէպի Պատմագիրքին մէջ ալ կը կարդանք հետեւեալը. «Գալով Բեսուն գիւղին, որ կը գտնուի Պեհեսնիէ չորս ժամ հարաւ, հոն կը բնակին 200 տուն մահմետականք, թուրք եւ քիւրտ: Բուն իսկ Բեսունի մէջ կան երկու լքուած եկեղեցիներ՝ աւերակ վիճակի մէջ, մէկուն անունն է Վասէլլօն, իսկ միւսէն՝ որ Կարմիր Վանք անունը կը կրէ, լոկ քարայր մը մնացած է»⁶⁰:

57. ՍԱՐԱՖԵԱՆ Գ., ամդ, էջ 82: Տեղն է, կը խորհնք, սրբազրելու Յակոբեանի կողմէ կատարուած տեղագրական այն կարեւոր վրիպակը՝ թէ Բեսուն կը գտնուէր «Պեհեսնից հիւսիս». հարկ է ուղղել հետեւաբար «Պեհեսնից հարաւ», հմտ. Մամր ժամանակագրութիւններ, հտ. Բ., նոյն, էջ 585:

58. ՊԵՆՆԵԱՆ ՏԵՐ ԿԱՐԱՊԵՏ ՔԶՆՅ., Մալաթիոյ տեղագրական եւ ազգագրական աշխատասիրութիւնը, հրահ. Մալաթիոյ Կրթասիրաց Ընկերութեան, էջ 228, ընդգծումը մեզմէ: Հրատարակութեան մէջ կը պակսի, դժբախտաբար, տպագրութեան թէ՛ վայրը եւ թէ՛ թուականը:

59. «Սիմն», է. (1933), թիւ 9, էջ 287:

60. ՍԱՐԱՖԵԱՆ Գ., ամդ, էջ 82, ընդգծումը Հեղինակէն:

Վասէլլօն կոչումը, շատ հաւանօրէն Վասիլ անունին յունական մէկ փոփոխակն է: Սրուանձտեանց, «Վասիլլոս» եկեղեցի չի կոչեր, այլ այսպէս կը գրէ. «Պեհեսնիոյ երեք ժամ անդին Բեսուն գիւղին առջեւ ՎԱՍԻԼԼՈՍ անուամբ քարակոյտ մը կայ, որ Գող Վասիլ ապարանքն է, կ'ըսեն. յորմէ կէս ժամ հեռի է Կարմիր Վանքի աւերակը, եւ ասոր կից քարայր մը, զոր կ'աւանդեն թէ Շնորհալոյն առանձին աղօթատեղին է եղեր»⁶¹:

Արշակ Ալպոյաճեանն ալ կը շեշտէ թէ Կարմիր Վանքը Բեսունի մօտ կը գտնուէր. իսկ «Բեսունն ալ, կ'աւելցնէ իսկոյն, կը գտնուէր Պեհեսնի քաղաքին հարաւային կողմը՝ չորս ժամ հեռաւորութեան, եւ հայախառն գիւղաքաղաք մըն էր 1914էն առաջ»⁶²:

Տէր-Ղազարեան, որ բաւական ընդարձակ ծանօթութիւններ ունի Կիլիկիոյ աշխարհագրութեան, անձնապէս կը վկայէ թէ «Տաիարակ դաշտի մը վրայ կառուցուած է Բեսունի Կարմիր Վանքը: Քնսում գիւղաքաղաքէն հիմա քիչ մնայ դէպի հարաւ եւ վանքին դիրքը»⁶³:

ԲԺ. Տէր Ղազարեանի այս հաստատումը, սակայն, տարակոյս կ'արթնցնէ մեր մէջ, եւ պահ մը կը խորհնք թէ ակնատեսի՞ վկայութիւն պէտք ենք նկատել իր արտայայտութիւնը՝ թէ ենթադրութիւն մըն է սոսկ կատարածը: Թերեւս անուշադրութեամբ կատարուած տեղագրական եւ կամ տպագրական վրիպակ մը ըլլայ, որովհետեւ բոլոր վկայութիւններն ալ, անխտիր, Կարմիր Վանքին աշխարհագրական դիրքը՝ Պեհեսնիի եւ Բեսունի միջեւ կը գետեղեն, եւ հետեւաբար Բեսուն քաղաքէն հիւսիս եւ ո'չ թէ Բեսունէն դէպի հարաւ դիրքի մը վրայ:

Այս բոլոր վկայութիւններն ու անդրադարձութիւնները, հետեւաբար, աչքի առջեւ ունենալով, կը մղուինք եզրակացնել՝ որ Հայկական Կիլիկիոյ մշակութային պատմութեան մէջ յիշուած այս նշանաւոր Կարմիր Վանքը, աշխարհագրականօրէն կը գտնուէր Գող Վասիլի իշխանութեան ենթակայ հողերուն մէջ, Բեսուն քաղաքին շատ մօտիկ դիրքի մը վրայ, Բեսուն եւ Պեհեսնի քաղաքներուն միջեւ գետեղուած: Այս էր եւ անկասկած ա'յս պէտք է նկատել այն գլխաւոր սկզբնապատճառը, որով այս վանքը կոչուած է նաեւ ՔԵՍՈՒՆԻ Կարմիր Վանք:

(Շար. 1)

Հ. ՏԱՀԱՏ ԵԱՐՏԸՄԵԱՆ

61. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ Գ., Թորոս Աղաք Հայաստանի մամբարդ, հտ. Ա., Կ. Պոլիս, 1879, էջ 323:

62. ԱԼՊՈՅԱՅԵԱՆ Ա., Պատմութիւն Մալաթիոյ Հայոց, էջ 585. հմտ. նաեւ էջ 489-490:

63. ՏԵՐ-ՂԱԶԱՐԵԱՆ Թ., Կիլիկիա, էջ 70, ընդգծումը մեզմէ: